

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑԸ



Գ Ր Ե Ց՝
ՍԱՄՈՒԷԼ Յ. ԹՈՒՄԱՅԵԱՆ



ՏՊԱՐԱՆ ՄԱՍԻՍ
ՊԵՅՐՈՒԹ
1945


ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑԸ



Գ Ր Ե Ց՝
ՍԱՄՈՒԷԼ Յ. ԹՈՒՄԱՅԵԱՆ



ՏՊԱՐԱՆ ՄԱՍԻՍ
ՊԵՅՐՈՒԹ
1945



Այս գրքիկին սպագրութեան ծախքը

սիրայօժար կերպով հոգացած է

Պէրուրաբնակ ծանօթ Վանառական Էւ Ազգային-Գործիչ

ՏԻԱՐ ՄԿՐՏԻՉ ՄՍՐԼԵԱՆ

203

ՀՕԲԾ

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ, ԱԻԱԳ ՔԶՆՅ. ԹՈՒՄԱՅԵԱՆԻՆ

ՀԵՂԻՆԱԿԸ

Պեյրուք, 22 Մայիս 1945

ՅԱՒԱԶԱԲԱՆԻ ՏՆՂ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ բարեկարգութեան հարցը այլեւս հրատապ բնոյթ ստացած ըլլալով, կարելի է աններելի անտարբերութեամբ ու «ինձմէ յետոյ ջրհեղեղ»ի փիլիսոփայութեամբ լռութեամբ անցնիլ հայ ժողովուրդին գոյութեան ու յարատեւման հիմնաքարը նկատուող պատմական հաստատութեան մը, իՐ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՅԻԻՆ՝ սպառնացող վրտանդին ահարկիկ պարտադրանքներու վրայէն:

Իրաւ է որ տակնն անդամ մը բանիրուէն և ձեռքն հաս գրիչներ հարցը կը դնեն սեղանի վրայ ու դարմաններու մասին առաջարկներ կը թելադրեն: Նոյնքան իրաւ է որ ժողովուրդին խորհող և մտածող դասը, մասնաւոր մտահոգութեամբ ու աջակցութեամբ կը հետեւի եղած թելադրանքներուն ու նախանձախնդիր արտայայտութիւններուն. բայց դարմանի մասին ցոյց տրուած անտարբերութիւնն ու պարտուելի անդործութիւնը կը խոցէ ու կը վիրաւորէ անոնց սրտերը խորապէս:

Մեր օրերուն, Հայաստանեայց Եկեղեցւոյ բարեկարգութեան խնդիրը հրապարակ դրուած է 1900ական թուականներուն, հեղինակաւոր եկեղեցական ու աշխարհական ղեմքերու կողմէ: Կէս դարու այլ շրջանին հայ միաքնն ու լրագրութիւնը լրջօրէն զբաղած են հարցով:

1908ին դարմանական կրթութիւն ստացած ծանօթ ստուռածաբան և Ս. Էջմիածնի Միաբանութեան անդամ Տ. Երուանդ վրդ. Տէր-Մինասեանց սկսած է Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան հարցով զբաղուիլ ուղղակի Ս. Էջմիածնի օրկան «Արարատ» ամսաթերթին մէջ որ

կը զուգադիպէր Կիլիկիոյ ներկայ վեհափառ Կաթողիկոս՝ Գարեգին վարդապետի խմբագրապետութեան օրերուն:

Տ. Երուսնդ վրդ.-ի գաղափարներուն ստեղծած փոթորիկը ծանօթ է օրուան բոլոր դէմքերուն ու հարցով մտատանջուած հետաքրքիրներուն:

Բարեկարգութեան գաղափարին համակրական տողեր ստորագրած է «Արարատ» ամսագրին մէջ վեհ. Գարեգին Յովսէփեան, իր վարդապետութեան օրերուն: Այդ օրերէն ասդին, բազմաթիւ հեղինակաւոր դէմքեր հարցը միշտ կենդանի պահած են:

Հոգեւոյս Տ. Բարգէն Ա. Կաթողիկոս բարեկարգութեան պէտքը նիւթ ըրած է 1922ին Նիւ—Եորք հրատարակուող «Հայաստանի Կոչնակ» շաբաթաթերթին մէջ, ընդարձակ կերպով: Դարձեալ, 1927ին Երուսողէմի Ս. Յակոբի վանքի միաբանութեան օրկան «Սիոն» ամսագրի էջերուն մէջ վերարծարծած է հարցը:

1937ի և 1938ի «Սիոն»ի թիւերը կը պարունակեն Պատրիարք Թորգոմ Արքեպիս. Գուշակեանի տեսութիւնները Հայաստանեայց Եկեղեցւոյ բարեկարգութեան նկատմամբ:

Այս խնդրով զրազուելու համար 1909—10ին Պոլսոյ մէջ կազմուած է Հ.Ե.Բարեկարգութեան Կեդր. Հանձնաժողով մը:

1923ի նոյեմբերին Մայր Աթոռին մէջ կազմուած էր «Հայոց Եկեղեցւոյ Բարեկարգութեան Կեդրոնական Հանձնաժողով» մը որուն առաջադրութիւնն էր հարցը քննել լրջօրէն, դարձանի մասին քաջիկ տոնելու մը տահադութեամբ. հոս հարկ չենք տեսներ յիշելու ուրիշներու ու աշխատանքը այս ուղղութեամբ:

Ինչ ինչ պայմաններով, մինչև այսօր բարեկար-

զուլթեան հարցը զսրղեան հանդոյցի մը ձեւով կը ներկայանայ մեզի: Դժբախտ իրողութիւն մըն է այս, որուն վրայէն կարելի է առանց աղաւաղանքի անցնիլ: Երեւոյթը սրքան ակառավարակ ու մտահոգիչ՝ նոյնքան յուսալքիչ ու նոյնիսկ մահացու է: Մէկ բան կ'ապացուցանէ: Հիդինակաւոր, կորովի ու զործունեայ գըլուխներու պակասը:

Զօրաւոր այս դատաստանը թող զիւրազրգիւ ջիւղերը ստքի չհանէ: Այդ ցուցարարութիւնը անտեղի ձեւակահովութիւն մը կրնայ ըլլալ միայն:

Հայաստանեայց եկեղեցւոյ իշխանաւորները, վերջին կէս դարու ընթացքին պատմութեան հօթը քննարկներուն երեւոյթը կը պարզեն մեր աչքին: Մտահոգութեան և բծախնդրութեան պակասէն զտոտ, տարբեր կերպով կարելի է բացատրել այն քունը որուն մէջ ինկած են մեր քիչ մը թմրած եկեղեցական պետերը:

Պարտապահազանդի հարկ չենք տեսներ, սակայն չենք կրնար տեսնել այն խոշոր ու աչք ծակող անտարրերութիւնը որ կը սաւառնի մեր եկեղեցիին զլխուն վրայ: Ամերիկայէն մինչեւ Եգիպտոս, Սիւրիա-Լիբանան, ուր հաւաքուած են մեր եկեղեցւոյ հարազատները ստուար թիւերով:

Յառաջիկայ գործնան Ս. Էջմիածնի մէջ գումարուելիք մեր Ազգային—Եկեղեցական համագումարը պատմական զեր կատարելու կոչուած է Հայաստանեայց եկեղեցւոյ ապագային նկատմամբ առնուելիք որոշումներու ու քայլերուն մէջ: Եկեղեցին յաջող ու ասպնապի ենթարկող երեւոյթները պէտք է գիտակցաբար տեսնել ու վրան աւանդապատճառքեան կամ Բեդինակապատճառքեան պէտք է անփութօրէն նկատողութենէ վրիպեցնել այն բոլոր բաւեկարգական հարցերը, որոնց

կը յարին խորհող մտքերն ու իրենց եկեղեցին սիրող հաւատաւորները:

Հայաստանեայց Եկեղեցին միշտ կենսունակ ոյժ մը եղած է հայ ազգային իրականութեան մէջ: Այդ ոյժը, զգալիօրէն տուժելու ու տկարանալու վրայ է, երբ աւելի քան երեք անո՛ր զօրացման պէտքն ունի ազգը: Այս երեւոյթն է որ կը մտահոգէ գաղութահայութեան ապագայով մտահոգուող բոլոր հայորդիները:

Գաղութներու մէջ, ինչպէս մեր պատմութեան բովանդակ ընթացքին, կենդանարար դեր կրնայ խաղալ տակաւին հայ եկեղեցին, թումբ կանգնելով օտարացումի ու աշխարհումի վտանգներուն դէմ: Հաւատքի սո՛ր խաթարման նիւթապաշտ օրերուն, յոյսի ու հաւատքի խոշոր ու կենսարար աղբիւր մը կրնայ ըլլալ Հայաստանեայց Եկեղեցին հայ վտարանդի ու օտար ափերու վրայ օրէ օր մեռնող բեկորներու համար:

Այս ակնկալութիւնները սակայն, երազ պիտի մընան ու ըլլան այնքան ատեն որ եկեղեցին զօրանալու ու վերակազմուելու զօրաւոր ու կորովի ճիգ մը չընէ: Այդ ճիգը ոչ միայն կարեւոր այլ հրամայական պահանջօքի էութիւնն է արդէն:

Հայաստանեայց Եկեղեցւոյ բարեկարգութեան հարցով մտահոգուողներու մտքին մէջ խոշոր տեղ բռնած է, ի շարս այլ խնդիրներու, նաեւ ԿՈՒՍԱԿՐԾ-ՆՈՒԹԵԱՆ հարցը: Այս մասին թերուպէմ շատ բան գրուած ու շատ բան ըսուած է:

Այս տողերը գրողը խորապէս կը հաւատայ որ կուսակրօնութեան հարցին անվախ ու լուրջ ֆինուքիւնը ու այդ գրութեան մէջ կատարուելիք կարգ մը փոփոխութիւններ կրնան արմատաւազ և բաժանարար դեր կատարել Հայաստանեայց Եկեղեցւոյ զօրեղացման ծը-

բազրին ու աշխատանքին մէջ: Ու քաղաքապէս, ահա', այդ մտահոգութենէն մզուած հոս կը ներկայացուին այն բարեփոխները որ կրնան ծնիլ կուսակրօնութեան գըրութեան բարեփոխումէն ստեղծուելիք նոր միջոցաւորին ու ասպարէզին մէջ:

Այս քիչ մը տպերախտ աշխատանքը ու անպայմանօրէն զօւլաորին թէզը ստանձնելով ու պաշտպանելով այս ատղերը գրողը լաւ կը գիտակցի այն անժողովըրդական ընդունելութեան որ իրեն կը սպասէ և որ իրեն դէմ ելլողներունը պիտի ըլլայ անկասկած, հիմ դաւարիւն մը, աւանդութիւն մը, եկեղեցւոյ հիմնաքարին հետ կապ ունեցող ճեւակէս մը պաշտպանելու իրենց իբր թէ «աւանդապաշտութեան» պնդումի ընթացքին:

Համոզումներն ու հաւատամքները, սակայն, միշտ ալ կրնան խօչընդոտանալ ու հակառակորդներու հանդիպիլ:

Այդ պարագան երբեք չի կրնար սրել կերպով նշազեցնել կամ տկարացնել այն խոր համոզումը զոր այս ատղերը գրողը ունի ներկայ կուսակրօնութեան գըրութեան մեր եկեղեցական կեանքին մէջ ունեցած վընասին նկատմամբ: Յետագայ էջերը (Ա. մաս) այդ հարցին յատկացուած մտածումներ ու տեսակէտներ ևն: Բ. մասը կապ ունի հայ եկեղեցիէն ներս աշխարհականներու ունեցած ներկայ լայն իրաւասութիւններուն արմատական կրճատումին ի նպատակ հանուած եզրակացութեան հետ: Հայաստանեայց եկեղեցիին ներկայ տկար ու անկեալ վիճակին զլխաւոր պատճառներէն մէկն ալ հայ եկեղեցականին ունեցած իրաւասութիւններու սահմանափակ ըլլալն է, նոյնիսկ զուտ կրօնական աշխատանքներու մէջ:

Եկեղեցին պէտք է վերադարձնել եկեղեցականին:

փառամոլ ու անպատասխանատու երեսփոխաններ կամ քաղաքական ժողովներու անդամներ պէտք չէ որ եկեղեցին ու եկեղեցականը կռուի դաշտ ընեն իրենց աշխատանքի տալու ծրարություններուն ու կատարական նըպատակներուն: Հայ եկեղեցիի ժողովրդապետականութիւնը, իր սխալ հասկացումն ու սխալ իրադրութիւնը վրայ եղող ձեւին մէջ, խոչոր վատնող մը սկսած է դառնալ հասարակութեան ու եկեղեցականութեան զրկուած:

Մեր մէջ չստանալ անդամներ մեր պակասաբաւութիւնները պարտկելու տալն, ինչպէս կռուակրօնութեան ներկայ ձեւը ջատագովելու տալն, կը սիրենք օտար եկեղեցիներէն մօտենալ, ինչպէս հռովմէական եկեղեցին, օրինակ ցոյց տալ, սակայն երբեք չենք ուզեր այդ օրինակը յիշատակել երբ դործնական ու հիմնական օգուտներ ըլլալիք սովորութիւններ որդեգրելու ժամանակը կը հասնի: Հռովմէական եկեղեցիին դօրութեան գլխաւոր գաղանքներէն մէկն ալ եկեղեցիին մէջ եկեղեցականութեան ունեցած տիրական ձայնն է: Ժողովուրդը չստանալ կրնայ խառնուիլ եկեղեցիի ներքին դործերուն: Եկեղեցականն է որ ուղղութիւն կռտայ իր համայնքի եկեղեցական դործերուն: Իսկ մե՞ր մէջ: Բայց պարզապէս ահաւոր է պատկերը: Եկեղեցիին հաւատք չընծայող որեւէ մարդ, նոյնիսկ լոկ քանաքանուկ մղումով, կրնայ խօսիլ, քննադատել ու ի հարկին բռնել ու բարբախտութեան ոյժով իր տեսակէտը պարտադրել եկեղեցական խնդիրներու մէջ. որուն արդիւնքներէն մէկն ալ այն կ'ըլլայ որ, եկեղեցականը կորսնցուցած ըլլալով իր լեկավարի ու առաջնորդի ինքնավստահութիւնն ու բնական իրաւունքը, դործիք ու խաղալիք կը դառնայ օրուան՝ եկեղեցական օրէնքերէ պէխապէս աղաներուն կամ ագէտ—բանգէտներուն:

Ուրեմն կը տեսնուի որ այս հարցը բամբուռած է
 երեք գլխաւոր մասերու՝

Ա. — Կուտակրօնութեան հարց:

Բ. — Աշխարհականներու իրաւասութեան հարց:

Գ. — Նիւթականի բարեկաւութեան հարց:

Այս ասոցերը զրոյր գրի առած է իր մտածումներն
 ու համոզումները հանդարտութեամբ, մտածումով ու
 առանց կիրքի ու քանդելու առաջադրութիւնն ունե-
 նալու, այն խոր հաւատքով ու յոյսով թէ Հայ Եկեղե-
 ցին սիրով ուրիշ բազմաթիւ խորհողներ ու աշխա-
 տողներ պիտի չզլանան իրենց մամանակն ու կորու-
 վը տրամադրելու բազմացում եկեղեցական բարեկար-
 գութիւնը կարելի դարձնելու օր առաջ, վստն շինու-
 թեան ու փառաւորման Հայաստանեայց դարաւոր եկե-
 ղեցւոյն, որուն ներկայ կեանքը շատ նոսր է մխիթա-
 րական ըլլալէ, շրջապատում և պարուրում ըլլալով
 օրուան վտանգներէն ու նորանոր պարտադրանքներէն

Գրողը իր աշխատանքը վարձատրուած պիտի ըզ-
 դայ ու իր եկեղեցիին հանդէպ իր ունեցած սէրէն ա-
 ւելի քաջայիրում պիտի նուիրուի Հայաստանեայց
 եկեղեցւոյ պայծառութեան աշխատանքին, իր զուգ-
 նաքնայ բաժինը տրամադրելով անոր, եթէ գիտակցի
 որ իր թէզին հակառակորդները պիտի ընդունին իր
 յայտնութիւններն ու եզրակացութիւնները այն ան-
 կեղծութեամբ ու հաւատարմութեամբ, որ զրի առ-
 նում ևն երկար ու լուրջ խորհողութենէ յետոյ:



Ա.

ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Անմիջապէս պէտք է ըսել թէ, կուսակրօնութիւնը հայ եկեղեցւոյ կեանքին մէջ ունենցած է իր շատ բեղմնաւոր ու շատ նախանձելի շրջանը: Խորքին մէջ որ և է խելահաս ու տրամաբանութեան հաւատացող էակ չի կրնար կուսակրօնութեան գաղափարին ու նուիրումին դէմ ըլլալ: Կուսակրօնութեան կեանքը կոչում մը ու նուիրում մըն է միանգամայն: Ամէն անոնք որ կը փափաքին ու կոչումը կը զգան այդ նուիրումին իրաւունք ունին իրենց եկեղեցիին ծառայելու այդ նուիրական ասպարէզին տրամադրած կարելութիւններով: Ուրեմն կը տեսնուի որ այս տողերը գրողը երբեք հակառակ եղած չէ ու չի կրնար ըլլալ կուսակրօնութեան գաղափարին դէմ: Ընդհակառակը: Կուսակրօնութիւնը պէտք է պահուի ու պահպանուի մեր եկեղեցական իրականութեան մէջ: Այդ մասին երկու կարծիք գոյութիւն չունի:

Սակայն...:

Ահա հոս է որ պէտք է կենալ ու մտամփոփ կերպով վերլուծել այն վիճակը որուն ենթարկուած է մեր կուսակրօն եկեղեցականութեան ներկայ կեանքը: Դրութեան մը կամ գաղափարի մը լաւ ըլլալը չի բաւեր միայն, կարեւորը գրութիւն մը կամ գաղափար մը գործնականացնելն է: Գաղանիք չէ ու գաղանիք ապահելու հարկ չկայ որ վերջին աւելի քան երեսուն

տարիներու ընթացքին, հակառակ քախուսած օսնե-
րուն ու գոյութիւն ունեցող հաստատութիւններուն կու-
սակրօն եկեղեցականներ չեն հասնիր ուղուած թիւով
ու պահանջուած նկարագրով: Ո՛չ միայն նորեր չեն
հասնիր, այլ գանուողներն իսկ թեթեւումի ու ընկեր-
կումի նշաններ ցոյց կուտան: Միւս կողմէ, առհասա-
րակ, հայ եկեղեցականութիւնը կը մեռնի քիչ մը ամէն
օր ու նորեր չեն հասնիր հիներու անհետացումով բաց-
ուած պարագութիւնները գոցելու համար:

Գլխաւոր պատճառը այս երեւոյթին:

Ա. — Ամուսնացած քահանայութեան բաժինն եղող
նուստացունցիչ վիճակն է:

Բ. — Կուսակրօնութեան ներկայ ըմբռնումին դէմ
գոյութիւն ունեցող անբարեացակամ վիճակն է:

Քննենք կացութիւնը:

Էր երբեմն որ Հայաստանեայց եկեղեցին կը հը-
պարտանար իր եկեղեցիով ու եկեղեցականներով:
Վերջին 1914—18ի Մեծ Պատերազմը որ վտարանդի
ժողովուրդի մը ճակատագիրը տպահովեց մեր զօրախոս
բեկորներուն, պատճառ եղաւ որ հայը կորսնցնէ իր եկե-
ղեցական կալուածներն ու իրր գաղթական ապրի կեանք
մը որ շատ հեռու է նիւթապէս միսիթարական ըլլալէ:
Էտքը՝ տարագրութեան կեանքը պատճառ եղաւ որ
յուստիսար մեր բեկորները, տկարանան սրոչ չափով
իրենց նախկին հաւատքին մէջ: Ատկէ առեմեց եկեղե-
ցին և եկեղեցականութիւնը: Առանձնապէս, հայ եկե-
ղեցականութիւնը չկրցաւ դիմագրաւել հոսանքը ու
ժամանակի ընթացքին եկեղեցականութեան տկարու-
թիւնը յայտնուեցաւ իր ճիշդ բնայթով:

Ժողովուրդը ամուսնացած քահանայութիւնը գը-
րեթէ սկսաւ անտես տանել երկու գլխաւոր պատճառ-
ներով.

Ա. — Հաւատքի ու յարգանքի պակասէն:


Բ. — Քաճանդաններու տգիտութեան վիճակէն:

Ամուսնացեալ քաճանդանութիւնը, միշտ ալ մեր մէջ տեսալ մը երկրորդական արժէք ունեցած էր ի վաղուց անտի: «Տէրաէր»ը միայն մեռել կը թաղէր, ամուսնութիւններ կը կնքէր ու տնօրհնէքներով իր հացը կը ճարէր: Պայմաններու ու պարագաներու փոփոխութեամբ քաճանդանութեան եկամուտները զրկելէ դադարեցան ու իրենց գոյութիւնը քարշ տուող աշգ. եկեղեցականները հանիւ թէ կրցան ապրելու զժողովրդի ճամբայ մը դանակ: Քաճանդանութեան այս անկեալ դժբախտութիւնը մեր մէջ անուղղակիօրէն քաջալերեց կուսակրօնութիւնը ժամանակաւոր կեանքով մը և ուղղակի սպաննեց ամուսնացեալ քաճանդանութիւնը: Ոչ ոք ուղեց ուշադիր ըլլալ այս ահաւոր վիճակի յայտնութեան:

Հիմա որ վտանգը եկած մեր գուռը կը բախէ, ո՛չ ոք կրնայ ուրանալ կացութեան ահաւորութիւնը:

Պատահաբար ամուսնացեալ բանաւայտը զրկելէ չունինք հայ եկեղեցիին մէջ: Եկեղեցականութեան այն դատը՝ որ ժողովուրդի հոգին պահած է դարերու ընթացքին, անոր մասն ու մարմինը ըլլալով:

Մէկ կողմէ հայ ամուսնացեալ քաճանդանութեան տնտեսական վիճակը թէ փրկիքապէս, նիւթապէս և թէ բարոյապէս և միւս կողմէն կուսակրօն եկեղեցականութեան կարծեցեալ (ստեղծի սխալ) գիրքին համբաւն ու տիրուածը պատճառ եղան որ հայ եկեղեցին գրկուի պատրաստուած, ցարգացած ու նախկին ամուսնացեալ բանաւայտիան գտան: Եկեղեցիին կեանքին մէջ դատ մը՝ որ պայման է անոր գոյութեան յարատեւման:



Զիրար խտրելու հարկ չկայ: Պարկեշտ որեւէ նախանձախնդիր հայ կ'ընդունի որ մարդիկ չեն ուզեր ամուսնացեալ քահանայ ձեռնադրուիլ, պարզ այն պատճառով որ ամուսնացած քահանայութիւնը մեր մէջ երկրորդական ու երրորդական դիրք սկսած է գրաւել ու ժողովուրդը տեսակ մը արգահատանքով կը նայի այդ նուիրական տապարէզի մէջ գտնուողներուն վրայ: Ախալ կամ չիտակ, այս է ժողովրդական ընդհանուր մտայնութիւնը, նոյնիսկ իրենք զիրենք մըտաւորական կարծողներու երանելի խումբին մէջն ալ: Դժբախտութիւն մը, որուն ստեղծման ու յարատեւման մէջ խոշոր դատապարտելի բաժին ունեցած են բարձրատիճան եկեղեցականները իրենք:

Կուսակրօնի մը քով ամուսնացեալ քահանան միշտ ալ կ'անտեսուի, հակառակ մարդոց արժանիքներուն: Այս է դժբախտ իրողութիւնը:

Երկրորդ տապարէզի յառաջդիմութեան խնդիրն է որ կը խորհեցնէ խելահաս ու բոլոր բարի հոգիները, որոնք ամուսնացած ըլլալով պիտի ուզէին կամ կ'ուզէին քահանայութեան տապարէզին մէջ նետուիլ սիրով:

Ես կը ճանչնամ կարգ մը չափ քաւ պատրաստուած հայ պատուելիներ, որոնք այս կամ այն ձեւով այժմ հեռացած Մայր Եկեղեցիի ծոցէն, չափ սիրով պիտի ուզէին կրկին վերադառնալ իրենց եկեղեցին, եթէ ամուսնացած քահանայ ըլլալով պարտադրուած չըզգային առաքիճանի յառաջացումի մասին մտահոգուելէ: Կը յիշեմ սղբացեալ Դեանդ Արքեպս. Դուրեանը, Ամերիկայի նահատակ առաջնորդը որ քանիցս երեք պատուելիներու այցելութիւնը ընդունած է այն խնդրանքով թէ իրենք պատրաստ էին եկեղեցիին գիրկը

ներսուելու եթէ իրենց առջեւ ասպարէզը գէթ որոշ
չափով բաց ըլլար:

Չենք ըսեր թէ պատուելիներու պարագան պատ-
ճառ մը պէտք է ըլլայ որ փոխենք մեր եկեղեցիին
ներքին կարգն ու սարքը: Այդ չէ՝ էականը: Էականն
այն է որ մարդիկ երբ կը մօտենան ասպարէզի մը,
կ'ուզեն մարդկօրէն անպատճառ յառաջգիմութեան
մասին խորհիլ: Այրապէս անոնք պիտի ապրին թերի
քիմիաբանական փորձառկութեան այս կեանքին մէջ
ու երբ իրենց կեանքի շրջանը լրանայ աչքերնին
գոցելով պիտի հեռանան իրենց շրջապատէն առանց
օգուտ մը ունենալու թէ իրենց անձին և թէ իրենց
համայնքին:

Կը տեսնուի որ ամուսնացած հայ բանաւայտքեան
վիճակը բարելաւելու ու բարձրացնելու խնդիրը չի
կրնար անտես տեսուիլ, եթէ իսկապէս, նախանձա-
խնդրօրէն ու լուրջ կերպով կ'ուզենք որ արժէքաւոր
ու պատրաստուած քահանայութիւն մը ունենանք մեր
եկեղեցիին մէջ:

Ուրիշ ահաւոր պարագայ մը որ շատ քիչ նկատի
կ'առնուի:

Ներկայիս ոչ միայն չենք մտահոգուիր գարդաղ-
եալ քահանայութիւն մը պատրաստելու խնդրով, այլ
չենք տեսներ այն ահաւոր բացը՝ որ կը ներկայանայ
մեր աչքին, երբ կը քննենք լուրջ կերպով ամուսնաց-
եալ հայ քահանայութեան ներկայ վիճակը: Գրեթէ
մտաւորական ու իր գերը ճանչցող քահանայութիւն
չունինք հայ ափեւքին մէջ, եթէ մասի վրայ համըր-
ւող քանի մը իրենց ծերութիւնը ապրող քահանա-
ները աչքի առջեւ չունենանք:

Տարակուսա՞նք. բայց քննելու է ընդհանուր
դատակերը համբերութեամբ:

Անք պատգուցէք Սիւրբա և Լիւրանան ու ըսէք թէ քանի հաս է երիտաւարդ հայ քահանաներու թիւը: Քանի՞ հաս է անոնց մէջ պատրաստուածներուն թիւը:

Անցէք Պապեատին: Քննեցէք վիճակը Հայֆայի, Եաֆայի, Ամմանի և Երուսաղէմի, վանքէն դուրս, քաղաքներու համայնքներուն: Ամէն տեղ, առանց բացառութեան, երիտասարդ վարդապետներն են որ կը քահանայադործեն, որովհետեւ ամուսնացեալ հայ բախանալ գոյութիւն չունի: Քիչ մը բախատուոր դադուր է Եգիպտոս: Բայց հին ալ հարցը թող քննուի պաղարեամբ և լրջութեամբ:

Անցնինք Ամերիկա: Հոս խօսք չենք ըներ Լերուպական հայ գաղութներուն առ այժմ: Ամերիկայի մէջ արդէն իսկ հայ եկեղեցւոյ ըտրեկարգութեան հարցը սկսած է ինքնիրեն լուծուիլ: Առնուազն ութը կուսակրօններ, որոնց հինգը վարդապետ, Միացեալ Նահանգներու մեծ քաղաքներուն մէջ ամուսնացեալ քահանայութեան պաշտօնը կը կատարեն: Ինչո՞ւ: Որովհետեւ պատրաստուած ամուսնացեալ քահանայութիւն չունինք: Ո՛չ թէ անոր համար որ ամուսնացեալ քահանաներու աւելի վճարում ընելու հարկը կայ: Ընդհակառակը: Ամերիկայի մէջ վարդապետներ, քահանայադործելու համար, չստ աւելի դրամ կը ստանան քան քահանաները, քանի որ ժողովուրդն արդէն իսկ յատկացեալ պիւտճէ մը ունի քահանայութեան պաշտօնին համար:

Երբ կը խօսուի ու կը գրուի հայ կուսակրօնութեան հարցին մէջ կարգ մը բարեփոխումներ ընելու խնդրին շուրջ, գէթ այս տողերը գրողին համար ամենավերջին կէտը այդ վիճաբանութեան մէջ կրնայ

Թեան ասպարէզէն խուսափող սարկաւազներու քայլը արդիւնք էր կուսակրօնութեան ասպարէզի դժուարութիւններուն ու եկեղեցական կարգին ընդհանրապէս ծանր լուծին: Սարկաւազները չէին ուզեր ամուսնանալով քահանայ ձեռնադրուիլ, իսկ չէին ալ ուզեր կուսակրօն ըլլալ և ամուսնական կեանքը զոհել: Այս երկու պարագային ալ տրուած բացատրութիւնները կարելի է որոշ վերապահումներով ընդունիլ: Այդ մասին հրապարակաւ վկայեց արդէն Փրոֆ. Աշոտ Աբրահամեանն ալ իր օրին, Դամասկոսի մէջ իր ըրած յայտարարութիւններով:

Խուսափում չկայ:

Կուսակրօնութիւնը սկսած է դժուարին պայմաններ դիմագրաւել: Օրուան հարկադրանքներն ու մըտայնութիւնները շատ մեծ դեր ունին ստեղծուած դժուարութիւններուն մէջ: Իրականութիւնն այն է որ դժուարութիւնները աչք ծակող աստիճանի հասած են ու խելացութիւն չէ կոյր դառնալ ստեղծուած կացութեան առջեւ: Չեռնածալ նստիլը, աւանդապաշտութեանէ ճառելը, «քար մ'իսկ պէտք չէ քակել հինէն, այլապէս եկեղեցին կը փլչի» տղայական յայտարարութիւնները դժբախտաբար իրողութիւնը չեն փոխեր. մա'նաւանդ չեն փոխեր հիւանդագին վիճակը՝ որ եթէ օր առաջ բուժուելու չըլլայ կրնայ մահացու ալ ըլլալ ինչ որ սկսած է ըլլալ, եթէ իրականութիւնը պիտի խօսինք:

Կուսակրօնութեան ջերմ պաշտպանները (*) այնքան իրաւունք ունին իրենց տեսակէտին մէջ, որքան

(*) Կուսակրօնութեան պաշտպաններ յաճախ դիտել կուտան թէ եթէ ենթականեր ամուսնանալու ըլլան, ինչպէս քա-

այդ գրութեան մէջ փափսխութիւն տեսնել ուզողները, պէտք է հանդարտութեամբ մտիկ ընեն երկու կողմն ալ: Միակողմանի ըլլալու և անպատճառ դիւրին ու հասարակաց գետին մը պաշտպանելու չէ, անպատճառ եկեղեցասէր կամ խելացի նկատուելու համար:

Այս տողերը գործը զօրաւոր կերպով կողմնակից է կուսակրօնութեան գրութեան մէջ փափսխութիւններ տեսնելու տեսակէտին մէջ: Շատ զօրաւոր ջատագով մը՝ առռնց երբեք սակայն արկածախնդիր և անխոհեմ աշխուղակութիւններու կամ չտիտղանցութիւններու կողմնակից ըլլալով:

ԿՈՒՍԱԿՐԹՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՀՈՒԵԼՈՒ Է. ՎԵՐՑՈՒԵԼՈՒ ՉԷ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻԻ ԿԵԱՆՔԷՆ: Այս մասին տե-

հանանիւր կ'ամուսնանան, անոնք իրենց ժամանակին մեծ մասը ընտանեկան մտահոգութիւններով պիտի վատնեն ու իրենց պաշտօնին ու ծառայութեան պիտի չկրնան նուիրուիլ հարկ եղած ազատութեամբ: Այս շատ տղայական ու մակերեսային պատճառաբանութիւնը, դժբախտաբար, կուսակրօնութեան պաշտպաններուն գլխաւոր փաստերէն մէկն է, որուն, կը կապեն նաեւ նիւթականի հարցն ալ:

Իրողութիւնն այն է որ աշխատասիրութիւնն ու ծառայասիրութեան ոգին ամուսնութեան հետ չի կրնար կապուիլ: Եթէ կուսակրօններուն թիւը այնքան բազմաթիւ է որքան քահանաներուն: Եթէ բաց խօսելու մեղքը պահ մը մոռնանք, կրնանք համարձակութեամբ ըսել թէ կուսակրօններու պարագային ամուրիութեան հաշգը նոյնքան մտահոգիչ ժամավաճառութիւն մը եղած է որքան ամուսնացեալ քննյոյն համար անոր ընտանեկան հոգը: Բայց հարկ չկայ տղայական ըլլալու աստիճան այս կողմնակի վիճաբանութեան մէջ մտնելու: Հարցը պէտք է լրջութեամբ քննել: Այդ պարագային ոչ մէկուն ամուսնացած ըլլալը և ոչ ալ միւսին ամուրի ըլլալը կարելի է կապել ենթակային աշխատելու ընդունակութեան հետ: Խելքն ու առաքինութիւնները բնածին են ու շատ քիչ կ'ազդուին արտաքին ազդեցութենէն:

կուսակրօն եկեղեցականներէն ոմանց ցուցադրած վարքն ու բարքն ըլլալ:

Թէև ինքնին այլ ալ այնքան նուրբ ու լուրջ վիճարանուելիք կէտ մըն է: Իրականութիւնը այն է որ Հայ եկեղեցւոյ մէջ, կուսակրօնութիւնը ներկայիս կը գրառուի առանձնապէս հովուական պաշտօններով որ էտպէս յատուկ ըլլալու էր ամուսնացած եկեղեցականի մը: Նոյնիսկ եպիսկոպոսներ հովուութիւնը բնի սկսած են, պարզ քահանայի մը պէս, քահանաներու պակասէն:

Յաւը հոս ալ չի լրանար հարցին կոճառ հանդամանքէն: Մարդ նոյնիսկ պիտի հանգստեցնէր որ կուսակրօններ հովուութիւնը ընէին ժողովուրդին, առանց չառ կարեւորութիւն առաւ ժողովուրդի փափրսութիւններուն կամ գանգաւաններուն. եթէ համոզումը զօրուար ըլլար թէ միշտ կուսակրօններ պիտի զըռնըէին Հայ եկեղեցիին մէջ զայն կենդանի ու վառ պահելու համար: Հոս է վստահիմ մեծուրիւնը:

Ոչ միայն ամուսնացեալ քահանայութեան գէմ դոց մնալով յառաջդիմութեան ասպարէզը, անոնք կը խրաչին այդ ասպարէզէն, այլ շատեր ալ, ուղղակի խրաչելով կուսակրօնութեան պարտադրած կեանքէն չեն մաներ այդ ուխտին մէջ ու կը քաջուին տարիներ ամբողջ ծառայելէ յետոյ այդ ասպարէզին մէջ:

Վերջերս ոչս կէտէն չառ յառկանչանական էին երուսողէմի քանի մը վարդապետներուն կարգաթուղութեան մասհոգիչ տրտաքը: Ասոր վրայ, տարիներով ժառանգաւորացի մէջ կարգացած խումբ մը տարկաւորներուն փախուսած զպրոցէն ու այդպէսով կրօնական, չառ հաւանաւոր, կուսակրօն ուխտէն:

Կարելի է ըսել թէ երկու պարագային ալ ըլլայ կարգաթուղ եկեղեցականներու և ըլլայ եկեղեցականու-

լի որոշ կարելի է ըլլալ: Ամէն հայ մարդ որ տեղեակ է իր եկեղեցիի կեանքի պատմութեան, առանց տնտեսներու կամ թուականներու կապուելու, կրնայ բնիւ որ ասեանին կուսակրօնութիւնը ոչ միայն Պաշտօնային Օրէնութիւն, մը եղած է մեր եկեղեցիին ու ազգին կեանքին մէջ:

Հասարակ տեղիք իրողութիւն մըն է որ անցեալին մէջ իշխանապետներու զուտներ կ'ըլլային կուսակրօն եկեղեցականներ ու իրենց պաշտօնը կ'արդարացնէին իրենց հեղինակութեամբ ու զիրքով: Սակայն մասնաւոր ենք պատմութիւնը, եթէ չենք ուզեր միշտ պատմութեան մէջ ասորոյներ ըլլալ: Ամէն դար ու ամէն օր իր պահանջներն ու պարտադրանքներն ունին: Պատմութեան մէջ մենք ամուսնացեալ հայրապետներ ալ ունեցեր ենք: Սակայն այդ մասին խօսելու իսկ պէտք չունինք:

Որովհետեւ այսօր ո'չ իշխանապետներ ունինք և ո'չ ալ իշխաններ՝ սրանք սիրով ու նախանձախնդրութեամբ թեկնածու ըլլան կուսակրօնութեան աշխատանքի տակաւն տապարէզին: Քանի որ չունինք նաեւ այդ տապարէզին վայլ ու յարգ տուող ժողովուրդ:

Ժամանակները շատ փոխուած ու պայմանները հիմնովին աշխարհապետ են: Այն աստիճան որ, ասօր ան որ հաւաքէ կուսակրօնութեան թեկնածու ըլլալ րոպէ թեկնածու ու ասանց աշխատելի կ'ընդունուի այդ տապարէզին մէջ, չուտով անշուշտ, յուսախար ընելու գիրենք հովանաւորող ու քաջալերող բարի հոգիները:

Անուններ ու գէպքեր տալու պէտք չկայ: Իրողութիւնն այն է որ այսօր կուսակրօնութեան տապարէզը ամենէն զիւրին ու ամենէն մտաշնչի տապարէզն եղած է այլ տապարէզը մտնել ուղղին համար: Ինքնախա-

բռնութեան պէտք չկայ հակառակը պնդելու, պարզապէս հակառակած ըլլալու համար, այն ազիտաւոր արգիւնքով՝ որ ասպարէզը կորսնցուցած է իր երբեմնի վեհաթիւնն ու շուքը:

Երբեմն բծախնդիրներ ու աւանդապաշտներ անմիջապէս, յանուն կուսակրօնութեան կոյր պաշտպանութեան, կը յիշատակեն կաթոլիկ եկեղեցիին պարագան ու այդ հսկայ ու հուժկու եկեղեցին օրինակ ցոյց տալով կ'ըսեն. «Եթէ կաթոլիկ եկեղեցին առանց փոփոխութեան կը պահէ կուսակրօնութիւնը, ինչո՞ւ հայ եկեղեցին պիտի չկրնայ նոյնը ընել»: Երանելիներ, որոնք, աւագ շատ քիչ բան գիտեն կաթոլիկ եկեղեցիի մասին. անոր նիւթական ճօխ պայմաններուն ու հետեւողներու բազմամիլիոն դանդուածին կողք հաւատքին, որմէ ԴԺԲԱԽՏԱԲԱՐ, այնքան զուրկ է այսօր մեր աչքը—բայ ու գաղթականութեան ճամբաներու վրայ հասակ քաջող անհուստ ժողովուրդը:

Յաճախ կը լսուին բծախնդիր ու բարի աշխարհական ու եկեղեցական անձնաւորութիւններ, որոնք կը խօսին.

—«Փոխանակ եկեղեցին փոխելու, ժողովուրդը փոխենք»:

—«Փոխանակ դրութիւնը փոխելու, ենթակաները փոխենք»:

Ըսելիք չկայ. բարի ու զնահատելի խօսքեր են տանք, բայց աւագ, միայն խօսքեր:

«Փոխենք» ըսելով կարելի չէ գրութիւն մը կամ իրողութիւն մը փոխել, առանց աշխատանքի կամ դարմանումի: Ու աշխատող չկայ: ԽՈՍԲՆ է տիրապետողը: Ու խօսքը, գորախտաբար, պիտի չկրնայ դարմանել Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ սակգծուած ներկայ տաղնապը:

Տաղնապը կայ ու կը կարօտի գարմանումի: Բիւ-
զանդական վէճերու պէտք չկայ: Ի՞նչ կ'ընենք այդ
ուղղութեամբ: Լրջօրէն կը խորհի՞ն մեր եկեղեցական
հայրերը այդ ուղղութեամբ: Մենք խորհուրդը յօդ-
ուածագրութեան մէջ չենք տեսներ և ոչ ալ գիրք
կամ պրօշիւր գրելու մէջ: Այդ կարգի անիմատ ու
տուաւելապէս պերճանք նկատուող աշխատանքներ
չառ կան եկեղեցական Բարեկարգութեան Հարցին նը-
ւիրուած նիւթին շուրջ: Բայց ո՞ւր տարած են մեզ
այդ կարգի աշխատանքները: Եղած ենք ուր որ կը
գտնուէինք: Յաճախ երբ կ'ըսուի կամ կը գրուի թէ
կուսակրօնութեան գրութիւնը նոյնիսկ հաճելի չէ այդ
կեանքը ապրողներէն մեծ մասին համար, կը գտնուին
մարդիկ որոնք թերահաւատութեամբ կ'ընդունին ըս-
ուածը:

Այս տողերը գրողը ուրիշ առիթներով ու հրա-
պարակով ըսած է թէ իր ճանչցած կուսակրօններուն
մեծագոյն մասը հակառակ են կուսակրօնութեան գը-
րութեան. նոյն հաւատաւով կը կրկնէ հոս ալ: Մաս-
նաւորաբար երիտասարդ կուսակրօնները հոգեւին հակա-
ռակ են ու չեն ըմբռներ կուսակրօնի իրենց կեանքը
զօր անոնք ընդունած են պարագաներու ու պայմաննե-
րու բերումով(*):

(*) Երբ տակաւին երիտասարդ է ենթական, կը պատա-
հի որ, անիկա հակառակ կ'ըլլայ կուսակրօնութեան գաղա-
փարին դէմ, սակայն երբ տարիներ անցնին ու ձիւնը ծած-
կէ այդ ենթական զլուխը, անիկա կ'ըլլայ ջերմ համակիր
մը կուսակրօնութեան գրութեան: Այս դժբախտ երեւոյթը
միշտ ալ կրկնուած է ու պիտի կրկնուի, այն տրամաբանու-
թեամբ թէ, վերջէն եկողներ կրնան իրենց վիճակով մահաճ

Այս մասին, սակայն, հետաքրքրական է ուղղակի դիմել կուսակրօններու գրածներուն կամ անոնց պատմութեան:

Էջմիածնական Բենիկ վարդապետ, 1910ին հրատարակած իր «Հայոց Եկեղեցու Վերանորոգման Խնդիրը» հատորին մէջ (էջ 38) ի մէջ այլոց ըսած է.—

«Վանական կեանքը» հոգեւարքի բոլոր նշաններն ունի:

«Վերջին տասը տարուայ ընթացքում կուսակրօնների թիւը 25ով պակասել է և մի հատիկ նոր վանականով չի աւելացել:

«Արդի վանական կեանքին և աշխարհահայեացքին կուսակրօն բառը անախրօնիզմ է և անպատշաճ: Այդ միայն մեր համոզմունքը չէ, այլ ամբողջ վանականութեան:

«Ձի գտնուել մէկը, բացի մի երկու տարակուսական ճգնաւորից, որ հակառակ չլինի կուսակրօնութեան: Մեզ հետ համաձայն են բոլոր կուսակրօնները՝ սարկաւազներից սկսած մինչև Եկեղեցու Գլուխը:

Փա՛ստ էք ուզում՝ վանքեր մտէք՝ որ տեսնէք թէ կուսակրօնութիւնը միայն հին ժողովների կանոնների մէջն է մնացել:

«Ամբողջութիւնը օտար է եղել հայոց եկեղեցու ոգուն, իսկ այժմ վնասակոր է:

Ըլլալ: Այս դատապարտելի ընթացքը, որքան տղայական ու մեղադրելի, նոյնքան անուշաւայի կերպարանք մը պտացած է մեր կուսակրօններուն մէջ, որոնք նախ կը խորհին իրենց հողեղէն անձը և ապա եկեղեցիին ապագան ու նոյնիսկ անոր գոյութեան սպառնացող վտանգը: Անպատճառ մարդ ձեռնալու է որպէս զի կուսակրօնութեան ջատագովութիւնն ընէ: Պէտք է մտածել այս երեւոյթին առջեւ:

Շատ ազնիւ կրօնաւորներ՝ անողորմ բամբաստանք-
ների չափազանցութեան դառնութիւնը ծծելով են մե-
ռել ու մեռած են անմեղութեամբ. շատերը՝ իրանց
կամքի հակառակ մարդկային տկարութեամբ ու
բռնութեամբ յաղթահարուած՝ հակաբնական տգեղու-
թիւններով հոգով ու մարմնով խեղանդամ դարձան
ու դառնում են. շատերն ախտաւոր ու վտանգաւոր... :

«Ծայրայեղ երկչոտ ողջախոհութիւնն ու նման
բղջախոհութիւնը վանականութեան մէջ շատ կեան-
քեր կերան ու կ'ուտեն :

«Երկուքն էլ աղբիւրն են բարոյական անկման :

«Եւ այս ամէնը ամուրիութիւնից, որ քրիստո-
նէութեան հետ կապ չունի :

«Ամուրիութիւնն է աղբիւրը վանական շահամո-
լութեան, քարասրտութեան, փոքրոգութեան, ծուլու-
թեան, հզօր նախանձի, բթամութեան և լքման :

«Ամուրիութիւնը շատ կողմով ազնիւ, իտէալա-
կան վանականի բարի վարուց գործըմանն է, փորոզ
բահը, տեղի ու անտեղի բամբաստանք :

«Նա սպանում է ժողովուրդի վստահութիւնը,
կտակածով թունաւորում սիրտը մարդկան, ջնջում է
հօր և որդու բարի յարաբերութիւնը :

«Մեր օրերում չկայ մի վանական՝ կրտսերից
մինչեւ էն աւագագոյնը, որ բամբաստուած չլինի :

«Յաւում է մեր հոգին այս վիճակի վրայ, ցա-
ւում ենք, ամաչում բայց չենք դատապարտում ոչ
ոքի, որովհետեւ գիտենք թէ բնութիւնը հզօր է մար-
դոց, նոյնիսկ հերոս մարդոց :

«Իսկ հինցած, օտարամուտ, բռնաղբօսիկ օրէնքը
իւր ջախջախուած ճիգով բռնութեան գէմ է կուռում :

«Կը ցանկացինք որ Հայ Ազգի հօր ձեռքը, որոնցաւ հոգին մեր եկեղեցուն և արդի աշխարհահայեացքին տնայարմար ու վտանգաւոր ամուրիութեան սովորութիւնը, ազեղացնող խորհումը Զնչէր հայոց եկեղեցու պաշտօն ճակատից: Չարիքների մեծագոյն մասը այդ աղբիւրի հետ կը ցամաքէր: Կեղծիքի ամպերը... լողալով կը հեռանային, կը չքանային: Վանակաւններն էլ չէին փախչի վանքերից կոչումը ծալլելով, եթէ միայն այս ձեռի վանքը մնայ, ընտիր մարդիկ վանք կը մտնէին»:

Այս տղերք դրուած են կուսակրօն արացաւ եկեղեցականի մը կողմէ 1910 թուականներուն: Բայց առանձին չէ Բենիկ Վարդապետ իր արգար ու խոխոս որոտայտութեան մէջ: Երսւանդ Վարդապետ Տէր Մինասեանց, ուրիշ Էջմիածնական մը, իր «Հայոց եկեղեցու վերանորոգութեան կնիք իրը» գրքին մէջ, էջ 71, խօսելով «Եկեղեցական Նուիրապետութեան» շուրջ, ի մէջ այլոց կ'ըսէ. —

«Հայոց րարծրագոյն կամ կուսակրօն հոգեւորականութիւնը ծանր ճգնաժամի մէջ է այսօր. այդ տրեւի նման պարզ է նշաններն ըմբռնել կարողացողի համար: Ամենամեծ խնդիրն այստեղ, մեր կարծիքով, այն է որ կուսակրօն հոգեւորականութիւնը ինքն ըստ ինքեան, իրերի բնական բերմունքով մահուան է դատապարտուած, այն պարզ պատճառով, որ հասկացող, ինտելիգէնտ տարրերը այժմ խոյս են տալիս այդ կոչումից և չեն կարող այլ կերպ վարուել, քանի որ եկեղեցու դրութիւնը չի փոխուել ժամանակակից հասկացողութեան համաձայն. հակառակ դէպքում նոքա մտած կլինեն մի լծի տակ, որ բոլորովին օտոր է ի-

րենց համար և ուր բացարձակ անկեղծութիւն է հարկաւոր կեղծ չներկաւոր համար:

«Ով որ դեռ կտակածում է թէ կուսակրօն հոգեւորականութեան վերջն եկել է, այդպիսիների աչքը բաց անելու և կատարուած իրողութիւնը ցոյց տալու համար, կարեւոր ենք համարում դնել հետեւեալ ըստտախտիկան:

«1898 թուին Էջմիածնի Միաբանութիւնը սենէր ընդամէնը 92 անդամ (արքեպիսկոպոս, եպիսկոպոս, վարդապետ և սարկաւադ): Տասն Դօթը տարի յետոյ 1908 թուին Էջմիածնի Միաբանութիւնը հաշուում էր ընդամէնը 67 անդամ, ուրեմն պակասել էր 25 հոգի: Դրա վրայ պէտք է աւելացնենք այն, որ 1898—1904 դեռ բաւական թուով նոր մարդիկ մտել են, այն ինչ 1905 թ., սկսած ոչ ոք մտած չէ և յոյս էլ չկայ, թէ մտնեն: Այն ինչ չարունակ դուրս են գալիս և պիտի դուրս գան: Այդպէս՝ միայն 1909 թուականին դուրս են եկել կրկին 3 հոգի, մեռել է մէկը, սրով Միաբանութեան թիւն իջնում է 63 հոգուց՝ մօտաւորապէս կէսը անընդունակ է դարձի կամ ծերութեան կամ անպատրաստութեան պատճառաւ: Սա մի այնպիսի լեզու է, որ չեն կարող չհասկնալ նոյն իսկ մեր «Ի ծնէ» կոյրերն ու խաւերը: Մանաւանդ որ դրութիւնն այլ չէ նաեւ Տաճկահայաստանում, ուր նոյնպէս զգացւում է պատրաստուած և պիտանի բարձրագոյն հագեւորականութեան մեծ կարեւորութիւնը»:

Այս տողերն ալ գրւում են զարգացած հայ կուսակրօն եկեղեցականի մը կողմէն 1910ի չրջաններուն:

Բայց հոս չի լրանար կուսակրօնութեան գէմ ընդվզող եկեղեցականներուն թիւը: Ոմանք չեն յանդգնիր իրենց գաղափարները դրի առնելու, զանազան

ներելի կամ աններելի նկատումներէ մղուած: Ուրիշներ, փոխանակ կուտակրօն մնալով, կռուելու գրութեան ղէմ, իրենց վրայէն կը նետնն սքեմը ու կը մաննն աշխարհական կեանքէն ներս: Այսպիսինսրուն թիւը շատ մեծ կորուստ մըն է մեր եկեղեցիին համար: Իսկ ատկուին ուրիշներ, աւելի «խոհմ» աւտելի «խորամանկ», ինչպէս Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեան, ընդունելով հանգերծ բարեկարգութեան պէտքը կուտակրօն կեանքին մէջ, կոչ կ'ընեն խոհմ շարժումին:

Դժբախտ իրողութիւնն այն է որ կուտակրօնութեան զրութիւնը, վերջին կէս դարու շրջանին, մեր եկեղեցական կեանքին մէջ բացարձակ մնասէ դուրս, ուրիշ օգուտ մը ունեցած չէ: Մեր պատուական եկեղեցականներէն շատ շատեր, աւելի օգտակարապէս պիտի ծառայէին իրենց եկեղեցիին ու ազգին, եթէ կուտակրօն զրութիւնը բարեփոխուած ըլլար եկեղեցական կեանքին մէջ: Ներսէս Վարժապետեան, Խորէն Նարպէյ, Էմմանուէլ Պաւլեան, Մեհրուժան Աշխարհունի խորապէս տուժած են իրենց կեանքին մէջ կուտակրօնութեան պարտադրանքներէն: Կարգաթողներու անունները չենք ուզեր յիշատակել հոս, աւանց յիշատակել ուղիւն անշուշտ անունները այն կուտակրօններուն, որոնք մեր ժողովուրդին բերնին վրայ ծամոց կ'ըլլան ու պիտի ըլլան ալ միշտ:

Կուտակրօնութիւնը մեր մէջ մտած է շրջաններու պարտադրանքներուն իրրեւ հետեւանք: Այսօր անցեալի ո՛չ պարտադրանքները գոյութիւն ունին և ոչ ալ կրօնական այն խոր ու համբուրելի կեանքը որ յատկանիշն էր Դ. և Յ. դարերուն:

Կուսակրօնութեան գրութեան յաւերժացումը, վանական կեանքէն դուրս, որեւէ արդարացում չունի աշխուս աշօթ: Այս իրողութիւնը պէտք է ըմբռնուի օր առաջ: Երանելի Նիհ օրերուն, աշխարհէն ձոնձրացած մարդիկ, մէկ կողմէն փրկիսօփառութեան հետամուտ ըլլալու մտածումով ու միւս կողմէն աշխարհի ու մարդոց չարիքներէն խոյս տալու ջանադրութեամբ, կ'ապաստանէին սրբախայրերու մէջ, հոն փառաւորելու համար Աստուծոյ անունը: Այսօր այդ կարգի մարդիկ գտնել եթէ ոչ անկարելի, գէթ շատ դժուար եղած է:

Բայց ի՞նչ հարկ այս կարգի նկատողութիւններուն
Բարգէն Ա. Կաթողիկոս իր «Բարեկարգութիւն
Հայաստանեայց Եկեղեցւոյ» հատորին մէջ (էջ 30)
հարցը կը լուծէ շատ պարզ ու շատ գործնական թե-
լադրութեամբ. «Քառանկյուն շառճել բաց բոլոր
եկեղեցւոյ բարձրագոյն սոսիանցները եւ կուսակրօնու-
րիւնը միայն կամաւոր վանականութեան վերածել, երեւ
վափառուներ ըլլան»:

Այս տղերքը զրուած են երջանկայիշատակ մեծ
եկեղեցականին կողմէ 1937ի շրջաններուն: Կարելի՞
է բռնել թէ, Բարգէն Ա. Կաթողիկոս արկածախնդրու-
թեամբ տողած էր իր վերայիշեալ զգացումները. թէ՞
անիկա նուազ պահպանողական էր մեր ամենապահ-
պանողական եկեղեցականներէն: Ըսել է որ այս կար-
գի Նիմնական կարծիքի մը արտայայտութեան ժամա-
նակ պահպանողականութենէ կամ ազատականութենէ
տւելի էականն ու լուրջ մտածում մըն է որ կը ստի-
պէ կենթական իր համոզումները հրապարակելու որ-
քան լրջամտութեամբ նոյնքան ալ նախանձախնդրու-
թեամբ ու ստեղծուած լուրջ ու վստիգաւոր կացութիւն

մը բարեութելու ու դարձանելու մտահոգութեամբ:

Կուսակրօնութեան խնդիրը, մասնաւորաբար իրենց տարիքը ապրած աւեփառ մեր եկեղեցականներէն շատեր, նոյնիսկ չեն ուզեր խօսքի նիւթ ընել: Անոնք պարզապէս կը ջլաշնանան այդ հարցին արծարծումով: Պատճառ: Առանց ըսելու որ անոնք նախանձախնդիր չեն կացութեան դարձան մը տանելու ընդհանուր և իրենց բաղձանքին մէջ, անոնք այս կամ այն նկատումով («մեզմէ յետոյ ջրհեղեղ») հոգեբանութեամբ կը մօտենան խնդրին: Թող մեր օրերուն չըլլայ այդ փոփոխութիւնը, կը տրամաբանեն անոնք: Արդէն հարցը ինքզինքը պիտի լուծէ կուսակրօններու թիւին նուազումով, կը պնդեն ուրիշներ: Իսկ այլք՝ ինչպէս Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեան, «կարգապահութիւն» ըստած բառը հոլովելով կը պնդեն ու կ'ըսեն որ կուսակրօնութիւնը մնալու է եղածին պէս, հայ եկեղեցւոյ կեանքէն ներս, ճիշտ օրէնք մնացած, անուհներ յիշեցնելով մեզի:

Երանելի՛ մարդիկ ու «առաջնորդներ»(*):

(*) Մեր մէջ առհասարակ, ինչպէս նաեւ եկեղեցական կեանքին մէջ այ, մարդիկ առաջնորդ կ'ըլլան եթէ զրիչ կամ խօսելու կարողութիւն ունին: Այս երկու առաքինութիւնները վկայական են ազգ ու եկեղեցի առաջնորդելու: Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեան մեր այն եկեղեցականներէն էր որ կեանքին մէջ թէ իբրեւ «կանոնապահ» և թէ իբրեւ «վարչագէտ» առաջնորդ խոշոր ձախողած մըն էր: Սակայն աւոր գրիչը (թէ ի՞նչ տուաւ այդ գրիչը, այդ այ ուրիշ հարց է) ու խօսքը զինք ըրին թէ ողջութեան և թէ յետ մահու մեծ եկեղեցական: Այս մասին կարելի է խոշոր տարակարծութիւն յայտնել: Եկեղեցականի մը «մեծութիւնը» ոչ իր գրչին և ոչ ալ իր խօսքին մէջ են: Ուրիշ առաքինութիւններ կը սպասուին եկեղեցականներէն...:

Աւանց մեր խօսքերը ծածկելու պէտք է ըսենք թէ «կարգապահութեան» ոգին այսօր ու երէկ ալ մեր եկեղեցականներուն մէջ աւելի զօրաւոր եղած էր ամուսնացեալներու քով քան թէ կուսակցօններուն քով: Ու «կարգապահութիւն» բառին լաւագոյն առումով:

Թորգոմ Արքեպս. Գուշակեան թեթեւեւ էր իր փոստարկութիւնները տուելու ու կուսակրօնութիւնը «կարգապահական ոգիին» վրայ պաշտպանելու ջանքին մէջ, երբ իր օրով գիտակ էր այն քիչ կարգապահութեան որ գոյութիւն ունէր կուսակրօն մեր եկեղեցականներուն շատ շատերուն քով: Քիչ բացառութիւնները միշտ յարգելի են: Եթէ կարգապահութիւն բառը կը կապուի «ամուրի մնալու» կառակերպութիւն եղած գրութեան, այդ մասին այլեւս շատ զգուշաւոր ըլլալու է մարդ խօսք մը կամ բառ մը արտայայտելէ առաջ: «Կուսակրօնութիւն» բառը իր իմաստը կորսնցուցած է այլեւս ու տիրող պայմաններուն տակ մարդիկ տռնուազն քաջութիւն ունենալու են ծաղրանք եղած բառ մը չսրբացնելու: Ետքը՝ ո՞վ կ'ըսէ թէ կարգապահական ոգին կը խախտի կազմակերպութեան մը մէջ, ինչ իմաստով որ կ'ուզէք առէք այդ բառը, եթէ մարդիկ ամուսնանան: Բառերով կամ բացատրութիւններով խաղալու ու ժամանակ սպաննելու օրն վաղուց անցած է արդէն: Վերանգաւոր ըլլալու չափ անցած: Ետքը, պէտք է ներկատել թէ, կուսակրօնութեան հարցը եթէ իրապէս լուրջ հանգամանք ստացած չըլլար, Ամենայն Հայոց հանգուցեալ Կաթողիկոս Խորէն Ա. ի 1937ի բարեկարգութեան նուիրուած նշանաւոր Զեկուցումին մաս չէր կազմեր «Հոգեւորականութեան Կուսակրօնութեան» խորագրին տակ:

Բայց ի՞նչ հարկ երկարարանելու: Վերքը ալ աւելի գրգռելու:

Իրողութիւնները ոչ կը լուծուին երկարապատում վիճարանութիւններով և ոչ ալ կը մոսցուն յամառ լուծթիւններով: Խոհամութեան ու իրականութեան ճամբան է որ կը յաղթանակէ ուչ կամ կանուխ: Այս տողերուն նպատակն ու իմաստը հրատապ դարձած հարց մը վերստին հրապարակ գնելն ու յիշողութիւններ դարմացնելն է:

Գիտական տեսութեան մը պէտք չկայ հարց մը լուծելու համար ո՛չ ալ անպատճառ վկայութիւններու անհրաժեշտութիւնը կրնայ տառապեցնել մեզի, երբ կը տեսնենք որ ահաւոր ՀՈԳ՝ մը կայ որ կը գրադեցնէ հանրային միտքը ու կը մաշեցնէ մեծ, սիրելի ու պաշտելի հաստատութեան մը ուղղակի կեանքը:

Առհասարակ եթէ պրպտելու ըլլաք մեր այն բոլոր եկեղեցականներու դործերը որոնք վրադուած են Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան հարցով, կը տեսնէք որ անոնք առանց այլեւայլի ուզած են որ հարկ եղած բարեփոխութիւնները կիրարկուին եկեղեցիէն ներս: Բայց անոնցմէ և ո՛չ մէկը իր մասը չէ շարժած, դործնականօրէն, աշխատանքը իր վախճանին հասցընելու համար: Բաւզէն կաթողիկոս Կիւլէսէրեան, Եւրոպա ու Ամերիկա ապրած այլ յանգուգն եկեղեցականը ԳԲԱԾ՝ ու ԽՕԱԱԾ՝ է ու ջատագոված է ամուսնացեալ Բանանահու առջեւ ասպարէզը բանալու բանաւոր խնդրին շուրջ, բայց երբեք դործնական քայլ մը առած չէ:

Մարդ չի կրնար բմբռնել թէ ինչո՞ւ: Եթէ ըսուածները համոզումի արգիւնք չըլլային պատաս-

խանատու եկեղեցական մը պէտքը չէր տեսներ իր կարծիքները հրապարակելու: Իսկ եթէ հաւատամքները այդպէս կը հրապարակուին, ըսել է որ հաւել մը, պահանջ մը, իրողութիւն մը, կացութիւն մը պարտադրած է իրենց ըսել ու զրկել տալ իրենց մտածումը:

Երբ կ'ըսուի ու կ'ընդունուի թէ ասպարէզ մը կոչումի մը արգիւնք է, ասիկա պարտաւ խօսք չէ. իրողութիւն է ու այդպէս ալ պէտք է մնայ:

Այսինքն:

Թէ կուսակրօնութիւնը պէտք է պահպանուի մեր եկեղեցիին մէջ ու այդ ուխտը միայն անոնք պէտք է ստանձնեն, որոնք կոչումը կը զգան ասպարէզին: Այլապէս, կուսակրօններու պէտք չունինք, որոնք անունով միայն կուսակրօն են, հեռու ըլլալով այդ ասպարէզէն իրենց կեանքով ու ըմբռնումով:

Կուսակրօնութիւնը պէտք է յատուկ ընել միայն վաճառուի ու այն պաշտօններուն համար որոնք իշխանութիւն ու խոշոր պատասխանատուութիւն կ'ենթադրեն: Այս կէտն ալ կախում ունի մեր եկեղեցական ընդհանուր ժողովին որոշումներէն:

Այսինքն: Կուսակրօններ պէտք է պաշտօնավարեն առաւելապէս վանքերուն մէջ ու կուսակրօն պէտք է ձեռնադրուին միայն անոնք, որոնք խելահասութեամբ այդ կոչումը կը զգան: Ու այդպիսիներ չստ պիտի գտնուին, եթէ մարդիկ ազատ ձգուին իրենց ասպարէզի ընտրութեան մէջ: Եւսքը՝ այդ ազատութեան մէջ մարդիկ պիտի կրնան արժեցնել իրենց ալ արժանիքը: Պէտք չէ պատահի որ, որովհետեւ մէկը կուսակրօն ձեռնադրուած է պզտիկուց, կարենայ իշխել շատ աւելի խելահաս, փորձառու ու տարիքոտ մարդու մը վրայ, որ ամուսնութեան «մեղ-

քով» կը մնայ հոն ուր որ եղած է իր ձեռնա-
ղրութեան օրէն սկսեալ (*):

(*) Ամերիկահայ ծանօթ լրագրող-հրապարակագիր Պր.
Ա. Ն. Նադար, որ յայտնի է իր ջիւղառ ու բանիմաց յօդուած-
ներով, կուսակրօնութեան մասին «Պայքար» օրաթերթի 1945
Մարտ 25 թիւին մէջ, ի միջի այլոց կը գրէ. —

«Բալիֆորնիոյ Հայոց Առաջնորդութեան երեսի. ժողովը, Կա-
թողիկոսական ընտրութեան պատգամաւորներուն հետ, որիչ խըն-
դիրներու գլուխը Ազգ. Եկեղեցական Համագումարին կը զրկէ առա-
ջարկ մը, թէ «Կուսակրօնութիւնը կամաւոր ըլլայ, եւ եկեղեցական
բարձր աստիճաններն ու պաշտօնները բաց ըլլան ամուսնացեալ
բահանայութեան առջեւ»:

Ինչոքիւ նոր չէ. այս մասին մեր օրերուն միշտ խօսուած ու
գրուած է. բայց արդիւնքի չէ յանգած: Այս անգամ ալ հաւանա-
կան չէ որ յանգի, եթէ նկատի առնուի ու խորհրդակցութեան ա-
ռարկայ ըլլայ: Գալիֆորնիոյ առաջարկը սակայն, ունի իր
կարեւորութիւնն ու արժէքը, իբրեւ յուշտար ժողովրդական պա-
հանջի, որոշ է որ ծախակցողներ ալ պիտի ունենայ: Ամենայն
Հայոց Հայրապետութիւնն ինքը խնդրոյն տոկադականութիւնը ըն-
դունած եւ 15 տարի առաջ յատուկ պաշտօնագրով միւս Աթոռնե-
րու տեսութիւնը ուզած էր. ատոնք ալ զրկեցին: Այն ատեն, այդ եւ
ուրիշ բարեկարգութիւններու համար մասնաւոր եկեղեցական ժողո-
վոյ գումարման պէտքը ցոյց տրուեցաւ. եւ ամէն բան բարձի թողի
մնաց:

Կարեւոր է մտադիր ըլլալ, որ եկեղեցական ժողովոյ մը որո-
շումով չէ, որ Եպիսկոպոսութեան եւ ատկէ վեր պաշտօններու
ծամբան ամուսնացեալ Գահանայութեան առջեւ փակուած եւ կու-
սակրօններու մենաշնորհ եղած է, որով օրինապէս պէտք ու պար-
տադիր ըլլայ նոր ժողով մը գումարել ընկալեալ կարգը փոխելու
համար: Օտար եկեղեցիներէ ընդօրինակուած, հետզհետէ տոկորութիւն
ու օրէնք դարձած է: Գիտենք, որ Լուսաւորչէն սկսեալ, մինչեւ Սա-
հակ, բացի Արիստակէսէ, իր որդիքն ու թոռները ամէնքն ալ ա-
մուսնացեալ էին, եւ այնքան մեծագործ ու սուրբ ծանցուած են,
որ Հայց. Եկեղեցին ամէն տարի անոնց տօնք կը կատարէ, «Պսակ
Ամուսնութեան»ը, «Կարգ Գահանայութեան» հաւասար եկեղեցւոյ

Ընդ որում մեր կեանքին մէջ չատ ու բաղմամբիւ օրինակներ ունեցեր ենք և ունինք տաղաւին այսօր ալ, ուր մարդիկ աշխատեցանք ըլլալով հանդերձ չեն տառապանք, տառապանքով ըլլալով իրենց տապաւնողին հետ: Այս կարգէն կարելի է յիշել մեր գործիչներէն ու մտաւորականներէն բաղմամբիւ անձեր, որոնց կեանքը իրենց ազգին ու իրենց ազգային համբաւելի տապաւնողին նուէր մը եղած է: Իրողութիւնն չէ՞ այս պարագան:

Կուսակրօնութիւնը համբաւելի ու նուիրական

Եօթը Խորհուրդներէն մէկն է: Եթէ Սահակ Պարթև տառապանքով չլլար, Հայաստան Վարդան, Հմայակ, Վահան Մամիկոնեանները և անոնց սերունդը չէր ունենար: Ե-րդ դարէն ետքն ալ տառապանքով եպիսկոպոսներու յիշատակութիւններ կան: Գրիգոր Նարեկացի, Ժ-րդ դար, Խոսրով Անձնացեաց եպիսկոպոսն որդին էր:

Երբ կը պահանջուի, որ Քահանայութեան առջև տապաւնող պէտք է լաց ըլլայ, չի նշանակիր որ կուսակրօնութիւնը խաբար խաբանուի: Խոյ կամաւոր ըլլայ.— «Որ կարողն է տանիլ տարցէ»: Յետոյ, Հայց. Եկեղեցւոյ սկզբնական կանոնով, կուսակրօն քահանային տեղն է՝ վանքը. և զրադումը, ուսմամբ ու այլապէս, վանականութիւնը ժողովուրդին մէջ գործ չունի: Մաշտոցի մէջ, Ձեռնադրութեան կանոնին տակ, բացորոշ գրուած է — «Այս են կանոնը հայրապետաց, կուսակրօն քահանայ, եթէ ժողովուրդեան միոյ առաջնորդ իցէ, նգովեալ եղիցի ինքն և ժողովուրդն իւր»: Այս կէտերը շատ անգամ դիտել տրուած են և կրկնութիւն պիտի երևին, բայց պէտք է որ կրկնուին, մինչև որ միտքերու մէջ տեղ ընեն:

Հայց. Եկեղեցին ոչ մէկ ժողովոյ կողմէ որոշում ու օրէնք չունի, արժանաւոր քահանաներու եպիսկոպոսացման դէմ. և եթէ Կաթողիկոս մը, իր որոշումով այդպիսի ձեռնադրութիւն մը ընէ, փառահարար ժողովուրդին և լուսամիտ եկեղեցականութեան կողմէ, ոչ միայն խնդիր չի յարուցուիր, այլ գոհութեամբ կ'ընդունուի: Հոգեւոյն Տ. Բարսէն Կաթողիկոսի տեսութիւնը այն էր որ տապաւնող պէտք է լաց ըլլայ Քահանայութեան առջև»:

ստպարէզ մըն է, որուն հասկացողութիւնը պէտք է ունենայ ամենէն առաջ ենթական: Այդ կարելի է ընել եթէ վարդապետ ձեռնադրուողները ըլլան երեսունը երեսունհինգը անց տղաքներ և ոչ թէ մանուկներ, այդ ալ մեր միջավայրին մէջ:

Ամէն հայ որ կը սիրէ իր եկեղեցին չի կրնար սուսնց յարգանքի չմօտենալ մեր սպրող բոլոր աշխանջողական կուսակրօններուն, որոնք՝ իրենց նուիրումով արդէն շահած են մեր սէրն ու յարգանքը: «Անձինք Նուիրեալք» կոչուած են անոնք, շատ իրաւամբ: Մեր յարգանքն ու սէրը պահելով հանդերձ մեր ներկայ սպրող ու գործող, երիտասարդ թէ տարիքաւոր կուսակրօններուն հանդէպ, չենք կրնար ըսել թէ ամէն ինչ լաւ է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին կեանքին մէջ և թէ բարեկարգութեան պէտքը զգալի չէ արդէն իսկ: Ժամանակը ոչ միայն հասած այլ վաղուց ալ անցած է: Անթիլիաս ու Երուսաղէմ (*), եկեղեցականներու պատրաստութեան երկու կեդրոն լլլալու կոչուած այդ հաստատութիւն-

(*) Երուսակրօններու պատրաստութեան խնդիրն ալ, ինքնին շատ լուրջ ու շատ կենսական հարց մըն է, արժանի առանձինն ուսումնասիրութեան ու նկատողութեան: Ոչ երուսաղէմ և ոչ ալ Անթիլիաս, որքան որ այս տողերը գրողը ծանօթ է պարագաներուն, մասնաւոր, միանուագ ու խնամալ ուսումնական ծրագիր մը չունին: Ամէն եկող ու գացող արեւորէն կամ տիտուչ իր ուզածին կամ զիտցածին պէս կը վարէ դուռ կրօնականներու պատրաստութեան համար կեանքի կոչուած կրթական հաստատութիւն մը: Այնքա՛ն թեթեւ վերաբերում, այնքա՛ն լուրջ ու վտանգաւոր կրթական ծրագրի մը հանդէպ:

ները չեն կրցած արդարացնել իրենց վրայ դրուած յոյսերը, անցնող քառորդ դարու շրջանին մէջ: Քառորդ դարը ամբողջ կեանք մըն է: Չախորդութիւններու մէջ միայն հաստատութիւններու վրայ կամ անոնց ղեկավարներուն մէջ պէտք չէ փնտռել քառութեան նոխազ պատասխանատուները: Ո՛չ ալ դժբախտութիւն մը բացատրելու տալն պէտք է կապուիլ ու կանգ առնել միայն անուններու կամ անձերու տուջեւ: Այդ արեւելեան հոգեբանութիւնը մեզ շատ հռուսները չի կրնար տանիլ:

Օրուան պահանջները կը բխին նոր պարտաբանութիւններէն:

Աշխարհ փոխուած է հիմնովին ու ամէն օր ալ փոխուելու վրայ է: Մեր իրականութեան պայմանները փոխուած են այսօր հիմնովին. չեն այն ինչ որ եղած են տարիներ կամ դարեր առաջ: Հայ եկեղեցին այսօր կ'ապրի նոր օրերու հովերուն ու գաղափարներուն ազդեցութեանց տակ: Պէտք չէ աննկատ անցնիլ այս պարտքան: Երէկուան ճշմարտութիւնները ամէն օր կը փշրուին ու նոր մեսիւսներ կը ծնին ամէն օր: Կապկպող չըլլանք: Հին չէնքեր ու հին մտայնութիւններ չքանդենք: Աւանդապաշտ ըլլանք. յարգենք մեր պաշտելի ու համբուրելի սովորութիւնները ու խելամտութեամբ մօտենանք հարցի մը կամ հարցերու որոնց ետեւ դարաշրջաններ կամուրջ նետեր են: Ոչ մէկ առարկութիւն այդ մասին:

Բայց...

Կարելի չէ օրուան պահանջներն ու նոր պայմաններն ալ տեսնել: Աւանդապաշտութիւնը մեղադրելի առաքինութիւն մը, նոյնիսկ մահացու մեղք մըն է երբ սխալ կը հասկցուի ու սխալ կը մեկնաբանուի:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին մեզի համար նուիրական ու պաշտելի հաստատութիւն մըն է: Այդ մասին մենք օտարներու կարծիքը ունենալու կամ մոռալու պէտք չունինք: Բոլորէն աւելի ու բոլորէն առաջ մենք գիտենք, կը զգանք ու կ'ըմբռնենք այդ փառաւոր ու անզուգական հաստատութեան հոյակապ կեանքն ու պատմութիւնը: Ատոր համար ալ, մեր պարտքն ու պարտականութիւնն է յաւերժացնել ու զօրացնել այդ պատուական ու պատմական չքեղ հաստատութիւնը:

Այս տողերը գրողին ըմբռնումով կարելի չէ բաղձացուած ու երազուած բարեկարգութիւնն ու զօրացումը ձեռք ձգել, առանց շարժումի կամ հիմնական շատ լուրջ ու մտածուած քայլերու: Էականն ու ուղուածը շարժումն ու քայլն է:

Այս տողերը գրողը կը հաւատայ որ կուսակրօնութեան գրութեան մէջ կարգ մը փոփոխութիւններու մուտքը այլեւս պահանջք և անհրաժեշտութիւն դարձած են: Առանց այդ շարժումին կամ քայլին թէ ամուսնացեալ Բահանյուրիւնը և թէ կուսակրօնութիւնը դատապարտուած են տկարութեան ու կազն ի կազ գործելու տխուր ու դժբախտ ճակատագրին^(*): Որուն արգիւնքը այն պիտի ըլլայ որ Հայ Եկեղեցին պիտի չգտնէ իր պայծառութիւնն ու պիտի չկրնայ ծառայել հայ ժողովուրդին այն նուիրումով ու ազգութութեամբ որ իր յատկանիշը եղած է դարերու ընթացքին:

(*) Որովհետեւ շատ սահմանափակ թիւով կուսակրօններ ունինք այսօր, յաճախ տեսնուած է որ, ի չգոյէ՝ ուրիշ նոր տյօժերու, գոյութիւն ունեցող կուսակրօններ շատ «ծանր» ու

Հայ Եկեղեցին, աւելի քան հրեւք, չինարար ու կենսամոռոտք առաքինութիւն մը ունի կառարկելիք մեր հայ իրականութեան բնկորուած խլեակներուն անարեւ կեանքին մէջ:

Առանց ներքին վերամոռոտութեան ու զարթնումի տն չի կրնար կառարկել իրմէ տկնկալուած աշգ. հրաշալի առաքելութիւնը:

Ամէն հայ որ իրապէս ու հատկացողութեամբ կ'ուզէ՝ Հայաստանեայց Եկեղեցին իր բարձր ու աւանդական առաքելութեան մէջ տեսնել, չի կրնար ըսել թէ սպասուած տկնկալութիւնները պիտի չկրնան գլուխ հանուիլ եկեղեցական ներկայ մեր ուժերով ու պայմաններով:

Զօրաւոր ու տրմատական ցնցումի կը կարօտին

«սուղ» կը ծախեն իրենք զիրենք, կարելի չէ անոնց վարք ու բարքին մասին խօսք ընել. կարելի չէ բարի «թելադրութիւններ ընել. Մօսի չեն ըներ, «եթէ մեզ չէք հաւնիր, ուրիշներ բերէք մեր տեղը» կ'ըսեն, կ'ըմբոստանան ու... Այն արդիւնքով որ եղածներուն առջեւ, մարդիկ կը լռեն ու անոնց շատ անգամ անարժէք դոյութիւնը կը յաւերժացնեն: Չէ՞ որ նորեր չեն հասնիր: Տեսէք թէ ո՛ւր հասած է եկեղեցին վիճակը:

Ետք՝ կուսակրօնութիւնը՝ տեսակ մը «Պրոպագանդիկ Աւազան» եղած է. այն որ յանձնառու կ'ըլլայ կուսակրօն եկեղեցական դառնալու կը մոռցուն անմիջապէս անոր պակասութիւնները ու այդ սքեմը կը քօյարկէ շատ մը անիմանալի տգեղութիւններ ու պակասութիւններ, որոնք՝ այնքան ու իրա՛ւ բծախնդրութեամբ կը վնասուին նոյնիսկ աշխարհական-հանրային գործիչի մը մէջ: Այս կարգի անիմաստ կրօնականութիւն մը յաւերժացնելը արդէն մեծագոյն ու անքաւելի յանցանքներէն մէկն է որ ցաւազինօրէն կը նշմարուի մեր եկեղեցական կեանքին մէջ:

մեր եկեղեցականները, որոնք՝ կորսնցուցած իրենց հեղինակութիւնն ու զործելու, առաջնորդելու, շինելու ու վտանգը իր բուն ձեւին մէջ ժողովուրդին գլխացնելու կարողութիւնը անխմանալի ոյժէ մը կ'ակնկալեն իրենց ու եկեղեցիին վերականգնացումը:

Ոչ մեր եկեղեցականութիւնը և ոչ ալ մեր եկեղեցին պիտի չվերականգնանան թէ երբեք չշարժին եկեղեցին սիրող հաւատացեալները, ըլլան անոնք եկեղեցական թէ աշխարհական: Մեր ակնկալութիւնն ու սպասումը այն է որ շարժումի ու աշխատանքի գլուխը անցնին առանձնապէս ու զլիաւորապէս Ի-ՐԵՆԻՔ՝ եկեղեցականները:

Հոս պէտք է, արգար ըլլալու համար, դիտել տալ թէ եկեղեցիներու վիճակը, առհասարակ, յուսահատական պատկեր մը կը ներկայացնէ կրօնական բոլոր համայնքներու համար ալ: Ուրիշներ՝ այս կամ այն ձեւով կ'աշխատին իրենց կացութեան դարձան տանիլ, իրենց պիտցած եղանակներով ու իրենց յատուկ պահանջներուն գոհացում տալու մտահոգութեամբ: Քրիստոնեայ աշխարհը մտահոգող այդ հարցին մասին հոս չէ որ կ'ուզենք մասնանշումներ բնել: Իսկան նկատողութիւնը այն է որ ամէն եկեղեցի իրեն յատուկ գծուարութիւններն ունի ու մարդիկ ձեռնածալ պէտք չէ դիմադրուեն ծնունդ առնող կացութիւն մը:

Պարկեշտութիւնը կը պահանջէ որ ընդունինք թէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ալ ներքին վտանգաւոր կացութեան մը տուել կը գտնէ ինքզինք: իյուսափելու չէ իրականութենէն: Դարձաններու մասին հանդարտ սակայն հիմնական քայլեր պէտք է

տանուին: Այս անկիւնէն դիտելով հարցը ահա, այս ատղերը զբաղը կը մտածէ թէ ժամանակը եկած է որ կուսակրօնութեան հարցը լրջօրէն քննութեան ենթարկուի, որպէս զի օրէ օր նուազելու եղող մեր եկեղեցականութեան շարքերը լիցուն նոր սլօնով ու նոր գէմքերով:

Կուսակրօնութեան գլխաւոր արդարացումը, գէթ ներկայիս մեզի համար, վանական կեանքն է: Մեր ունեցած վանքերը պէտք ունին վանականներու: Այդ մասին երկու կարծիք գոյութիւն չունի: Վանականութիւնը տակաւին խոշոր պէտք մըն է մեր եկեղեցիին համար: Ետքը՝ ունինք կրօնական այնպիսի գիրքեր ու պաշտօններ որ կարելի է, յահուէն սովորութեան մը կամ հմայքի մը, եթէ ո՛չ ուրիշ պատճառաւորանութեան, փերապահել կուսակրօն մեր եկեղեցականներուն: Ասանք կողմնակի խնդիրներ ու հարցեր են, որոնցմով պէտք են հետաքրքրուել տառակոտպէս մեր եկեղեցական իշխանութիւնները: Ու կ'արժէ որ լրջօրէն հետաքրքրուին:

Իսկանը սկզբունքով ընդունիլն է թէ կուսակրօնութեան վիճակն ու դրութիւնը պէտք ունին վերաքննութեան ու բարեփոխութեան: Անգամ մը որ հասարակաց մտածման գետին մը պատրաստուի այս ուղղութեամբ, ատկէ ծնելիք աշխատանքն ու այդ աշխատանքին կապուած ձեւականութիւնները կրնան կատարուիլ ու կարգադրուիլ պատշաճօրէն:

Անտարբերութիւնն ու անիմանալի պահպանողականութիւնը արդէն իսկ խոշոր չափով վնասած ու վտանգած է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կեանքը: Անուրանալի այս տխուր իրողութիւնը հարկ չկայ պաշտպանելու կամ անտեսելու:

Հայ եկեղեցւոյ ներկայ դժբախտ կացութեան մեծադոյն պատասխանատուն իրենք, եկեղեցականներն են: Պէտք է ճշգիւ այս կէտը: Արդար չէ որ հայ եկեղեցականութիւնը այնքա՞ն անտարբերութեամբ ու անգործութեամբ դիմադրուէ ստեղծուած փտանգը: Շատ զարմանալիօրէն, յաճախ կը զիտուի որ, զուտ կրօնական հարցերու մասին ալ ժողովուրդն է որ կը ստիպուի խօսելու կամ մտահոգելու: Այս երևոյթը պարզապէս ո՛չ միայն մտահոգիչ այլ ըմբոստացուցիչ է:

Կ'արժէ որ կացութիւնը քննուի իր լրջութեամբ ու ձեռնհաս իշխանաւորներ անօրինկն պարան ու պատշաճը: Ամէն ինչ բախտին չի կրնար ձգուիլ: Շատ անգամ, եթէ ոչ միշտ, բախտը ձեռակերան է մարդ տրորածին:

Հայ եկեղեցին պէտք ունի անձնուէր ու անվախ տառջնորդներու իր ներկայ ճգնաժամէն, դէպի բարի ու լուսաւոր նոր շրջան մը, ոտուած ընելու համար: Բարեպաշտ ու մտահոգ աչքեր անձկութեամբ և սպասումով կը նային Ս. Էջմիածին, Անթիլիաս ու Երուսաղէմ, այդ կրօնական կեդրոններուն պետերէն տկրնկալելով արագ աշխատանքի օրհնաբեր ու կազդուրիչ շարժումը:

Ամէն շրջան իր աշխարհահայեցքներն ունի: Հասարակ տեղիք զիակիք է որ մեր եկեղեցական հայրերը Գ., Դ. և Ե. դարերուն քրիստոնէութիւնը յարմարցուցած էին իրենց ժամանակի փիլիսոփայական աշխարհահայեցքներուն. նոյն իրաւունքը ունենալու են մեր ներկայ եկեղեցական հայրերը: Իրաւունքը զլացող չկայ իրենց, բարեբախտաբար, այդ

իրաւունքը դործադրելու կամքն ու քաջութիւնը ունեցող Հիւսյ դժբախտաբար(*):

(*) Իրրեւ յաւելուած յարմար նկատեցի հոս զետեղել փոքրիկ յապաւումներով, Մուշեղ Սերոբեանի, նախկին ծանօթ Արմաշական — Արքեպիսկոպոս, «Կուսակրօնութիւնը Հայ Ազգային եկեղեցիին մէջ» (էջ 66) յօդուածը որ մաս կը կազմէ «Բարեկարգութիւն Հայ Ազգային եկեղեցիի» իւր հատորէն, հրատարակուած 1931/ին.

«Մեր եւ արեւելեան միւս եկեղեցիներու համար կուսակրօնութեան հարցը բոլորովին տարբեր հանգամանքով կը ներկայանայ մեզի: Մենք եկեղեցական երկու դասակարգ ունինք. կուսակրօն եւ ամուսնացեալ, կամ սեւ ու ճերմակ, ինչպէս պիտի ըսէին ռուսերը: Այս երկուութիւնը բաւական է իրր ապացոյց ծառայելու, թէ նախնական եկեղեցին ամուսնացած եկեղեցականներով կը կառավարուէր, թէ մենք շատ ալ համամիտ չենք գտնուած կուսակրօնութեան, որ մեր մէջ մուտ գտած է արտաքին ազդեցութեամբ: Կուսակրօնութեան հանդէպ մեր նախնեաց անսիրելութեան իրր փաստ կրնայ ծառայել նաեւ սա պարագան, ըստ որում մեր եկեղեցին կուսակրօններուն առջեւ պատուարներ քաշած է կոնոններով, եւ զանոնք արգելափակած վանքերու խորը:

Արեւմտեան եկեղեցին, որ Դ. դարէն սկսեալ տեսականօրէն ջատագովը հանդիսացաւ կուսակրօնութեան, չկրցաւ ընդհանուր հանգամանք տալ անոր, դարերու ընթացքին, րանի որ հազարաւոր եկեղեցիներ հակառակեցան սկզբունքին, եւ մինչեւ ժ.Ս. դարու վերջերր դեռ գոյութիւն ունէին ամուսնացեալ քահանաներ եւ եպիսկոպոսներ, Կաթողիկ եկեղեցիին մէջ:

Սա շատ որոշ է, սակայն, թէ հին Հայ Ազգային եկեղեցին, հաւատարիմ հետեւող մը առաքելական աւանդութիւններու, եւ առաքելական կոչուած կանոններու, Հայ Ազգ. եկեղեցին, որ երեք տիեզերական ժողովներու վճիռներով բաւականացաւ, եւ չուզեց նոր ժողովներէ դաւանական կամ ծիսական նորութիւններ ընդունիլ, օր մը ինքզինքը հարկադրուած զգացր է, — եթէ սխալ չերմուսնողութենէ մը չէ՝ առաջնորդուած, — թերեւս ավամայօրէն ընդունելու կուսակրօնութեան դրութիւնը, առանց հրաժարելու

ամուսնացեալ եկեղեցականութենէն: Ահա մայրէն կ'ըսենք, որովհետեւ կուսակրօնութեան մեր մէջ մուտրին համընթացարար եկեղեցին ժողովական կանոններով սեղմումներու ենթարկած է: Կուսակրօնները, արգիլած՝ անոնց պաշտօնավարութիւնը թեմերու մէջ, եւ գիրենք փակած փանքերու պարիսպներէն ներս: Այս պարագան, ի միջի այլոց, շատ որոշ կ'ընելի Ս. Սահակի կանոններէն, որ ցոյց կը արտի, թէ փանքերը կուսակրօններուն համար շինուած են: Սահակի այս կանոնը իր ուժը պահեց դարերու ընթացքին: Իսկ Դնորայի «առ կրօնաւորս խաբարդեացեալացս, որ ի վանորայս» թղթով կ'արգիլէ կուսակրօններու թողուլ իրենց փանքերը եւ հաստատուիլ քաղաքներու եւ գիւղերու մէջ: Յետոյ երբ կը խօսի ամուրի (=այլի?) երիտասարդ քահանայի մասին, կը յանձնարարէ որ ան ալ վանք քաշուի. «որովհետեւ, կ'ըսէ, աշխարհիկ կեանքի մէջ իր պաշտօնին բերմամբ միշտ յարաբերութիւններ ունենալով կիներու հետ, եւ զանոնք խոստովանցընելով. կարելի չէ սբօղօթեալմբ ճառայել Աստուծոյ»: Դնորայի իր այս տողերով անգամ մըն ալ կը հաստատէ սա իրողութիւնը, թէ քաղաքներու մէջ պաշտօն վարող ո՛րեւէ կուսակրօնի համար գայթումի եւ գայթակղութեան աւելի չը պակասիր, եւ թէ անոնց համար անկարելի է մտքուր կեանք ունենալ: Կուսակրօններու յատուկ այս վանարգելումը սպացոյց մըն է, թէ մեր եկեղեցիի հայրերուն անձանթ վեր կուսակրօն պաշտօնականներու գայթակղական կեանքը քաղաքներու մէջ, եւ այդ պատճառով էր, որ անոնք արգիլեցին կուսակրօններուն, շփում եւ յարաբերութիւն ունենալու ժողովուրդին հետ: Կուսակրօնները փանքերու մէջ արգելափակ, իրենց ժամանակը նուիրեցին Ս. Գրոց ընթերցման, գրականութեան, թարգմանութիւններու, ձեռագրի ընդօրինակութեան եւ զարդանկարի: Եւ հագիւ անոնցմէ ոմանք — տարին մէկ կը կու անգամ քարոզչական շրջագայութիւն մը կը կատարէին քաղաքներն ու գիւղերը, եւ կը վերադառնային իրենց փանքերը: Դոնէ այս է ընդհանուր վիճակը, զոր մեզի ցոյց կուտան մեր փանքերու պատմութիւնը, եւ եկեղեցական ժողովներու կանոնական որոշումները:

Երբ վանական կուսակրօնութիւնը ծխակատարութենէ եւ ընտանեկան պարտականութենէ ազատ, իր պարագոյ ժամանակը կը արամադրէր մտքի մշակութեան եւ գրականութեան, իր կողքին ունենալով անշուշտ կարգ մը ծոյլ, տգէտ եւ պորտաբոյծ վանա-

կաններ ալ, աշխարհական հոգևորականութիւնը կարծես օրէ օր հրաժեշտ կուտար մշակոյթի կեանքին եւ հետզհետէ կ'իյնար տգիտութեան մէջ: Այդ տգիտութեան պատճառներէն մէկը պէտք է փնտել ժողովրդական սովորութեան մը մէջ: Քահանան հին ատեններէ ի վեր հարկադրուած է ապրիլ ժողովրդական նուէրներով կամ պաշտի եւ ժամուցի եկամուտով: Եւ որովհետեւ չէր կարելի վստահիլ այդ պատահական եկամուտին վրայ, կարենալ ընտանիք մը, մանաւանդ նահապետական ընտանիք մը ապրեցընելու համար, քահանան հարկադրուեցաւ ծխական պաշտօնակատարութենէ: Աւելցած իր ժամանակը յատկացընելու երկրագործութեան կամ ձունարուեստի, սովորութիւն, որ մինչեւ մեր օրեր գոյութիւն ունէր գաւառներու մէջ...:

Այդ օրէն սկսեալ սոնահարուեցան կուսակրօններու փանակեցութեան յատուկ ժողովական կանոնները: Անոնք հրաւիրուեցան դէպի քաղաքները, եւ մասն ժողովրդական խաւերու մէջ: Կուսակրօն փանականներու այս նորաստեղծ եւ անկանոն քաղքենիութիւնը պատճառ մը առեկի եղաւ անտեսելու քահանային զարգացման կարևորութիւնը: Այս գոյալիճակին անընդմիջական արդիւնքը սա եղաւ, որ կուսակրօններ *de facto*, եւ հակառակ հին պանոններու, մենաստէրերը գառնան եկեղեցական բարձրագոյն աստիճաններուն:

Քառասուն տարիներ առաջ լրագրական յօդուածներովս կը յայտարարէի. թէ մնգի համար աշխուսէր եղած է եկեղեցական պաշտօնէութեան եւ զատկարգի երկուութիւնը, եւ կ'առաջարկէի կուսակրօնութիւնը քնջել: Որովհետեւ անոնց երկուքն ալ հոգևորապէս անօգուտ դարձան ժողովուրդին: Կուսակրօնին տմուրի հանգամանքը, եւ ամուրի եկեղեցականներու հանդէպ դարերէ ի վեր սնուցուած ժողովրդական անվստահութիւնը պատճառներ եղան, որ ան չկրնայ մտնել ժողովուրդի ներքին ծայրերուն մէջ, շօշափելու անոր ընտանեկան վէրքերը, բարոյական քայքայումները, կրօնական տարակոյսները, գանոնք կարենալ դարմանելու համար: Անիկա իր առաջնորդի հանգամանքով, իւրացուց քահանային նախկին պաշտօնը վէճերու կարգադրութեան, եւ հանդէպ քաղաքային իշխանութեան ժողովուրդին դատար պաշտպանելու, ասոր վրայ աւելցընելով քարոզչութիւն մը, եւ վերջին ատեններ ծխական վարժարաններու հսկողութիւնը: Այս փոփոխութեան հետեւանքով, քահանային ըստին մնաց պարզ ծխակատարութիւնը միայն: Այս-

պէսով երբ անգամ մը ամուսնացեալ եկեղեցականութեան ձեռքէն յափշտակուեցան իր իրաւասութիւնները, եւ իր առջեւ փակուեցաւ վերելքի ասպարէզը, այլ եւս կարելի չէր սպասել, որ իրապէս արժանաւորներ, թարքի ու նկարագրի տէր անձեր յօժարէին սոսնձներէ քահանաներու թողուած ծիսակատարի անփառունակ պաշտօնը: Եւ արժանաւորներու չկամութեան հետեւանքը սա եղաւ, որ քահանայութիւնը ասպարէզ մը դարձաւ անուս, անմշակ, բարոյական արժէքէ ու նկարագրէ զուրկ կարգ մը մարդոց, ժամկոչներու, ծախողած արհեստաւորներու, սնանկացած խանութպաններու, որոնք քահանայական ասպարէզին մէջ տեսան իրենց համար ոչ թէ կոչում մը, այլ սպրեկու միջոց մը միայն: Եւ այս այսպէս պիտի մընայ որչափ ստոնն շարունակէ եկեղեցական դատարարի երկրութիւնը, որչափ ստոնն եկեղեցական բարձրագոյն պաշտօններն ու աստիճանները (եպիսկոպոսութիւն, պատրիարքութիւն, կաթողիկոսութիւն) վերաբաւոր կուսակրօնութեան առանձնաշնորհումը ըլլան:



Մեր աչքին առջեւն է այսօրուան կուսակրօնութեան սպրած կեանքը եւ ստեղծած գայթակղութիւնը: Կը ճանչնանք կուսակրօններ, եւ բարձրաստիճան եկեղեցականներ, որոնք մծղնայ յարաբերութիւններ մշակած են իրենց քոյրերուն եւ կորօր աղջիկներուն հետ: Կուսակրօն եպիսկոպոսներ, որոնք սրեմի տակ եւ յետոյ սրեմը անպաշտօն կերպով մէկ կողմ թողով, տասնեակ տարիներ սպրած են իրենց հումանուհիներուն հետ, ծախսելով անոնց դրամը, եւ օրին մէկը, երբ դրամն է սպառած, մոզական գաւազանի մէկ հարուածով ինքզինքնին նորէն գտած են կուսակրօն շարքերու մէջ, եւ հովուական-առաջնորդական պաշտօններու կոչուած: Եւ չգտնուեցաւ հոգեւոր հեղինակութիւն մը, որ զործադրէր Շահապիւփանի ժողովին 14րդ կանոնը, որ կը հրամայէ «կարգալոյժ ընել եպիսկոպոսը, երէցը կամ սարկաւազը, որ կին կը պահէ», կամ Առաքելական Կանոններու 25րդը, որ կը հրամայէ «կարգալոյժ ընել պռնկութեան, գողութեան եւ երգմանաշնորհութեան մէջ գտնուող եպիսկոպոսը, երէցը կամ սարկաւազը»: Տեսած ենք վարդապետներ, որոնք անպատկառ շնականութեամբ իրենց թարերարներուն կիները զլխէ հանած, առեւանգած, եւ անոնց ընտանեկան կեանքը թունաւորած են: Կուսակրօններ, որոնք իրենց գայթակղական կեանքին հետեւանքով դաշունահարուած են:

Աւելին ալ կայ գիտ: Բննիկ վարդապետ «Իմ պատասխանս բոլոր զարարտիչներին» գրուածքով քանի մը տարի տուաջ տապէս կ'արտայայտուէր:

«Տասն եւ հինգ տարի է ես ամուսնացած եմ անթաքնելի կերպով: Ընտանիքով ապրել եմ նաեւ էջմիածնի վանքի մէջ, ուր ապրում էին եւ ապրում են իրենց ամուսինների հետ Ներսէս արքեպիսկոպոս Խիւղայէրտեանը, Ագամ վարդապետը, Եղիշէ վարդապետը, Գէորգ վարդապետը, Դանիէլ վարդապետը, եւ Հայրապետներից եւ «ո՛չ մէկը» չպահանջեց, որ անոնք բաժնուին իրենց ամուսիններից: Այժմու վեհափառը (Գէորգ Ե.) երբ հրաւիրեց Գէորգ կաթողիկոսին վարդապետանալ, վերջինս աղնուութիւնն ունեցաւ նախապէս յայտնելու, թէ կ'ին ունի: Իսկ այս հանգամանքը կաթողիկոսը արդեւ չհամարեց, որ նա վարդապետանայ, եպիսկոպոսանայ, արքեպիսկոպոսանայ, առաջնորդ դառնայ: Սակայն նոյն կաթողիկոսը պաշտօնական թղթով 1919 թուին հրամայեց վանական անուակներին, որ երեք օրուայ ընթացքում ապախիններին եւ մանկահասակ տղայ ծառաներին» հռաւյրենն վանքից...»:

Բննիկ վարդապետ իր այս յօդուածով ցոյց կուտայ, թէ Ամնայն Հայոց Հայրապետութեան Աթոռանիստ վանքը ապականութեան բոյն մըն է դարձած, ուր բռնարարուած գաղթական աղջիկներ ինքզինքնին լիճ նետելով անձնասպան եղած են, աստամով կուսակրօններու մօրուքը փետտելէ վերջ:

Բննիկ վարդապետ իր այս հրապարակային տեղեկատրուութեան ընթացքին, երբ կը յիշէ իր եւ ուրիշ կուսակրօններու ամուսնացած եւ կ'ին ունեցած ըլլալու պարագան, մեզի չքսեր, թէ օրինաւոր կ'իննօր են ունեցածնին, թէ ո՛չ ապօրէն հարճեր: Եւ եթէ օրինաւոր կ'իներ են, ո՞վ պտակած է զիրենք, ինչպէ՞ս, հրապարակա՞ւ, թէ գաղտնի, թէ օրինական ի՞նչ հիմերու վրայ կատարուած են այդ ամուսնութիւնները, քանի որ կանոնական տրամադրութիւններ կան: Թէ յետ վարդապետական ծնունդութեան եւ օժման, կուսակրօն մը չկրնար ամուսնանալ, եւ միւսնոյն ժամանակ պահել իր կուսակրօնի դիրքը: Բայց այս լուսթիւնը բան մը չի պակսեցընէր տխուր եւ աստաբոյր իրականութիւնէն, եւ անգամ մըն ալ ցոյց կուտայ, թէ նոյն իսկ վանքերու շրջապատին մէջ կու-

ստիրօն անառակութիւնը կրցած է գոհացում գտնել իր մարմնական կիրքերուն, իր բնական ցանկութիւններուն:

Եկեղեցիի մէջ գոյութիւն ունեցող կուսակրօնութիւնը օրինաւորապէս, բարոյապէս եւ բնութեամբ ապրելու իրաւունքը չէ՝ ունեցած անցեալին մէջ, եւ չկրնար ունենալ ներկային եւ ապագային համար: Գուսակրօնութիւնը անբարոյական ժամանակաւորէպէս մըն է, եւ կուսակրօնի սրեմը պարզապէ՛ս պատանք մըն է եղած մոլութիւններով ապագանուած կեանքի մը վրայ: Ժամանակին Սէն Պէրնարը րտած էր. «*Վերցուցէք եկեղեցիէն պատուաւոր ամուսնութիւնը եւ անբխժ անկողինը, եւ պիտի տեսնէք, թէ զայն պիտի լեցրնէք շնացողներով, ազգապիղծներով, հրէշային լիտիներով, եւ ամէն տեսակ պագշտութիւններով ու շուայտութիւններով*»: Դարերու կեանքը ապացուցած եւ հաստատած է: Էն Պէրնարի պայծառ հեռատեսութիւնը: Ուրեմն, կուսակրօնութիւնը պահպանել կամ շարունակել պիտի նշանակէր քաջալերել շնութիւնն ու պտնկութիւնը, պիտի նշանակէր կրօնապէս հովանաւորել անբարոյականները, պիտի նշանակէր ուրանալ ամուսնութեան սրբութիւնը, եւ զայն ստորադասել սեռային ապօրէն յարաբերութեան: Ընդունինք, թէ բացարժակ անհնարութիւն մը կայ ամբողջ կեանքի մը տեւողութեան ընթացքին պայքարիլ մարմնի սեռային պէտքերուն հանդէպ: Բնութեան օրէնքը անտողիտալի է եւ անյաղթելի. ան կ'իշխէ մեր վրայ, եւ եկեղեցիի արգելիչ հակաբնական կանոններ չկրնալով յաղթել բնութեան օրէնքին, կուսակրօններու օրինաւոր ամուսնութիւնը արգիլելով, զանոնք բռնի մղած կ'ըլլանք դէպի մեղապարտ եւ ապօրէն յարաբերութիւններ:



Գուսակրօնութեան դրութեան ջնջումին համոզուած պաշտպան մը ըլլալով հանդերձ, ցկրուների տեսակէտով վնասակար չեմ գտներ հասկացողութիւն (comproomis) մը կուսակրօնութեան պահպանութեան համակիրներուն հետ, կանխաւ վստահ ըլլալով, թէ ուշ կամ կանուխ անոնք ալ պիտի յանգին իմ համոզումներուս: Ուստի ես ալ իրենց հետ պիտի բռնմ պահ մը, պահպաններ կուսակրօնութիւնը հետեւեալ պայմաններով.

1.— Գուսակրօններու ձեռնադրութեան ստեղծ կատարելիք ուխտը պէտք է ըլլայ *Ժամանակաւոր ուխտ*, որ պիտի տեսնէ այնչափ ատեն, որչափ ատեն անոնք կրնան զիմանալ ժուժկալու-

թեան եւ ողջստոհութեան: Այն վայրկեանէն, երբ մարմնական բընական ցանկութիւնը կը խօսի իրենց մէջ, եւ ժուժկալութեան կեանքը կը դառնայ անտանելի, պէտք է անոնք ազատ ըլլան իրենց կուսակրօնի ուխտէն, եւ ամուսնանան. եւ իբրեւ ամուսնացեալ քահանայ պաշտօնավարեն եկեղեցիին մէջ: Կուսակրօնութեան տյապիսի ուխտ մը արդէն ընդունուած էր սարկաւազներու համար, Անկիրիոյ Ժողովին (313—315) կողմէ (Կան. 10րդ):

2. — Ուխտի տեւողութեան ընթացքին կուսակրօններ պէտք է ապրին վանքերու մէջ, մարութ եւ քրիստոնէավայել կեանքով եւ պարապին ինքնազարգացման, կրօնական, բարոյական, կրթական, խմբատասիրական, եւ եթէ կ'ուզէր գիտական եւ գեղարուեստական ուսումնասիրութիւններով:

3. — Կուսակրօններու արգիլել եկեղեցական—աշխարհական տամէն տեսակ պաշտօնավարութիւն (առաջնորդական, պատրիարքական, կաթողիկոսական) թողլով որ այդ պաշտօններուն կոչուին մի միայն ամուսնացեալ եկեղեցականներէ արժանաւորագոյնները:

Կրնանք այս որոշման յանգիլ անմիջապէս, եթէ իրապէս եկեղեցիի բարեկարգութիւնը տիրական նպատակն է եղած մեր մէջ, որովհետեւ կուսակրօնութիւնը, վերջամուտ սովորութիւն, դաւանական հարց մը չէ, այլ բարեպաշտական եւ կարգապահական, իր էութեանը մէջ: Եկեղեցին չկրնար տարբեր դիրք, տարբեր կեցուածք որդեգրել ամուսնացեալ եկեղեցականութեան հանդէպ, քանի որ ամուսնութեան սրբութիւնն ու աստուածադիր հանգամանքը ընդունուած է, զայն քրիստոնէական խորհուրդներու կարգը դասելով:

Կաթողիկ եկեղեցիին մէջ կուսակրօնութիւնը, կարգապահական տեսակէտով պէտք մը դարձաւ, մասնաւանդ այն օրէն, երբ Պապերը քաղաքական ինքնակալութեան կամ վեհապետութեան ձգտումներ ունեցան: Աւանց ատոր թերեւս անոնք կուսակրօնութիւնը պարտաւորիչ ընելու պէտք իսկ պիտի չը զգային: Մեր կաթողիկոսները իրենց դիրքին բերմամբ, չվարակուեցան քաղաքական այդ հիւանդութենէն, եւ ատով իսկ պէտք չունեցան բնաւ կուսակրօններու անձնուէր եւ կարգապահ բանակին:

Այսպիսի պայմաններով ընդունուած համախոհութիւն մը վերջնապէս պիտի լուծէ կուսակրօնութեան լինելու կամ չը լինելու հարցը: Վստահ ըլլանք, թէ երէկի եւ այսօրուան կուսակրօններէ

շատեր այդ ասպարէզը մտած են, ո՛չ թէ կրօնական կոչումով (vocation), այլ մտած են վախճալով ընտանեկան սրտասխտանատրութիւններէ, մտած են շահու եւ փառասիրութեան զոհացումի համար: Փակեցէք կուսակրօններու առջեւ շահու ասպարէզը, խորտակեցէք իրենց փառասիրութեան վերելքին սանդուխը, առէք անոնց ձեռքէն իրենց վայելած այսօրուած առանձնաշնորհումները, եւ պիտի տեսնէք. թէ կուսակրօնութիւնը, իր հմայքէն մերկացած, հետեւող պիտի չունենայ այլ եւս»:



ԱՃԽԱՐՀԱԿԱՆՆԵՐՈՒ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՀԱՐՅ(*)

Հայ Եկեղեցին իր ներկայ տաղնապէն յաջողապէս չի կրնար դուրս գալ ու վերատանալ իր երբեմնի զօրութիւնն ու հմայքը, եթէ հայ եկեղեցականութիւնը տէր չըլլայ իր իրաւունքներուն ու կրօնական իշխանութեան: Այս տողերը գրողը խորապէս համոզ-

(*) Աշխարհականներու, եկեղեցական գործերու միջամուխ ըլլալու իրաւասութենէն տուժող եկեղեցին միայն Հայաստանեայց Առաքելական եկեղեցին հղած չէ: Բողոքական ու ալ ոչ-կաթոլիկ ու «ժողովրդավարական» եկեղեցիներ ալ ծանր կերպով տուժած են աշխարհականներու եկեղեցական գործերու միջամուխ ըլլալու իրաւասութիւններէն: Եկեղեցին ու Պետութեան իրարմէ բաժնուելալն է որ եկեղեցին պիտի կրնայ իր իրաւունքներուն տիրանալ ու իր ոյժին ազդեցութիւնը զգալի ընել կրօնական ու հոգեկան կալուածներուն մէջ: Պէտք է ըմբռնել, օր առաջ, այս իրողութիւնը ու առ այդ պէտք է պատրաստել ժողովուրդին միտքն ու գիրքը: Մենք չենք ուզեր հոս վիճարանութեան նիւթ ընել մեր եկեղեցին զուտ «ազգայնական» ու «ժողովրդավարական» նկարագիրն ու անոր պատմութիւնը: Այդ փորձը մեզ շատ հեռուները կրնայ տանիլ: Պէտք է շեշտել թէ Հայաստանեայց եկեղեցին միշտ ունեցած է իր ուրոյն նկարագիրը ու իր մասնաշատուկ փոխանցման ու բարեկարգութեան շրջանները: Հայաստանեայց եկեղեցւոյ պայմաններն ու պատմութիւնը տարբեր երակներէ կուգան մեզի: Առաջադրուած փոփոխութիւններէն որեւէ կերպով պէտք չէ մնասէ եկեղեցին, օգտուողները պիտի ըլլան թէ ժողովուրդը և թէ այդ փառաւոր հաստատութիւնը:

ոււած է որ եթէ հայ եկեղեցին կ'ուզէ ըլլալ զուտ կրօնական ու հոգեւոր հաստատութիւն մը, զօրաւոր ու ջգուտ, կենդանի ու ամուր, արմատապէս պէտք է կրճատէ աշխարհականներու իրաւասութիւնները եկեղեցական կեանքին ու խնդիրներուն մէջ: Կը գզամ որ ազգայիններ ու մասնաւորապէս կարգ մը կուսակցականներ որ կուսակցութիւնը՝ արատահմանի մէջ ապրուտի ու ազմկարարութեան միջոց բրած են, զօրաւոր կերպով պիտի բողոքեն աշտիսի լանդուղն ու անժողովրդապետական կարծիքի մը դէմ: Անոնք անմիջապէս պիտի ճառեն Ազգային Սահմանադրութիւնէն ու անոր ժողովրդապետական տրամադրութիւններէն:

Տարիներու ընթացքին զիտուած է որ, կուսակցականներ կամ հրապարակի վրայ երեւեալու հիւանդութիւնէն տառապող երանելիներ բան գործ ձգած, ոտքով դլխով նետուած են եկեղեցական գործերու մէջ ու շատ անգամ իրենց խելքէն ու հասկացողութիւնէն վեր խնդիրներու մէջ ուզած են դերակշիռ դեր ունենալ: Այս պարզապէս անըմբռնելի ու անհասկնալի վիճակէն անպայմանօրէն, ժամանակի ընթացքին, տուժած է եկեղեցին, փոխանակ օգտուելու:

Բացատրենք ու մանրամասնենք:

Իրերու ու դէպքերու բերումով, ու ամանց համար շատ անհասկնալի ու Լիւսիկ ժողովրդապետականութիւն բառին հոլովումով, աշխարհականներ տիրական դարձած են ազգային—եկեղեցական ժողովներու ու գործերու մէջ: Այն աստիճան որ, եկեղեցականներ ստիպուած խաղալիկ ու գործիք եղած են այս կամ այն մարդոց կամ այս կամ այն կազմակերպութեանց ձեռքին մէջ:

Հանդարտ տրամաբանութեամբ եթէ քննենք հարցը կը տեսնենք որ զժրախտ իրողութիւն է ըսուածը, թէեւ ոմանք ատիկա բարիք մը նկատած են տարիներու չրջանին, Ազգային Սահմանադրութեան «ԼԳՅԱ» և «ԴՅԵԱ» իրաւասութիւններուն վրայ հիմնուելով: Աշխարհականներու իրաւասութիւնները այն ստաիճանին հասած է որ անոնք, այս կամ այն նկատումով, իրենց ուզած օրն ու տեղը, կրնան այս կամ այն եկեղեցականը նեղը դնել կամ անոր դործունէութեան բացարձակ արգելք հանդիսանալ, այն արգելեւքով որ ժողովրդապետականութեան սխալ բմբռնուած իրաւասութիւններէն ուղղակի կը տուժէ եկեղեցին ու եկեղեցական համայնքը, որ հույկական սիւլեռքն է այսօր:

Հայ եկեղեցականը փոխանակ իր ժամանակը ամբողջովին ժողովուրդին կրօնական պէտքերուն յատկացնելու ու հոգեւոր կեանքով զբաղուելու, կը ստիպուի էնթրիկներու աշխարհին մէջ իր դիւբն ու գոյութիւնը տեսականացնելու ապերախտ ու տաժանելի տխուր աշխատանքին նուիրելու: Անշուշտ այս կողմութիւնը յատուկ չէ վանական կեանքին ծանօթ մեր եկեղեցականներու: Թէեւ ատեն ատեն, հոն ալ կը զգացուի աշխարհականներու ռանձգութիւնները կամ ռանձգութիւններ ընելու ջանքը:

Աչքէ անցուցէք սիւլեռքի որեւէ առաջնորդութիւն կամ եկեղեցական որեւէ պաշտօն, դուք դժբախտութեամբ պիտի ընդունիք որ չատ անգամ եկեղեցականներ խաղալիկ կամ կռուախնձոր եղած են աշխարհական հակամարտ ոյժերու ձեռքին մէջ:

Շատերուն համար միշտ անհասկնալի եղած է

աշխարհականներու միջամտութիւնն ու միջամուխ
ըլլալը զուտ կրօնական խնդիրներու: Հաւատացէք
որ երեւոյթը պարզապէս ըմբոստացուցիչ ու յուսա-
հատեցուցիչ է: Հայը յաճախ տիրացու մակդիրով
նախատեսած է: Պէտք չկայ այդ նախատինքը բաժ-
նելու: Սակայն, անգամ մը եթէ լրջօրէն ու մտահո-
գութեամբ քննելու ըլլանք մեր արտասահմանեան,
այսպէս կոչուած ազգային կեանքը, կը տեսնենք որ
մեր ամբողջ ազգային նիւթիւնն ու ազգային կեանքը
կեդրոնացած է եկեղեցիներու կամ եկեղեցականներու
անձին շուրջ: Դժբա՞խտ կացութիւն: Անշուշտ որ
դժբախտ: Իրողութիւն: Անշուշտ որ ախուր իրողու-
թիւն:

Նոյնիսկ այն մարդիկը որոնք քաղաքական գոր-
ծունէութիւն կը ծախեն, որոնք ազգին ու հայ ժողո-
վուրդին ճակատագիրը ու քաղաքական տենչանքնե-
րը կ'ուզեն դարբնել, այո, նոյնիսկ այդ մարդիկը
զբաղուած են ժամով ու ժամաբարով: Եկեղեցիով ու
քահանայով: Մէկ խօսքով՝ տիրացիութեամբ:

Տարիներով ամբողջ եկեղեցին կռուախնձոր եղած
է «աթուակայութեան» տենչէն բռնուած նոյնիսկ
«անհաւատ» մարդոց ձեռքին մէջ: «Բացի—զոյի»ի
ախուր պատմութիւնը, Նիւ Եորքի մէջ Դուրեան Արք-
եպիսկոպոսի խժդուժ սպանութիւնը, արտասահմանեան
բոլոր կարեւոր կեդրոններու մէջ բարձրատիճան հ-
կեղեցականներու յարստեւ ու անիմաստ հալածանքը
անձանօթ նորութիւններ չեն դժբախտաբար: Նոյնիսկ
այն մարդիկ որոնք երբեք չեն հաւատացած եկեղեց-
ւոյ կրօնական առաքելութեան և ուզած են ժխտել
անոր գոյութիւնն իսկ, յանուն կուսակցական տաք-

տիկայի, ստքով—ձեռքով միջամուխ եղած են ՏԱՐԻ-
ՆԵՐԱՎ, զուտ եկեղեցական—կրօնական խնդիրներու,
միշտ ալ ի վնաս եկեղեցւոյ շահուն: Սակայն այս ե-
րեւոյթին մասին խօսելն իսկ սրամաշուք ու տխուր
գործ է: Իրողութիւնները չեն ժխտուիր:

«Ինչո՞ւ այսօր, ոյժի վաճառում ու վնասաւարու-
րիւն տեսի եր տեսցուեալ, լաւուն եկեղեցիին, երբ եկե-
ղեցականութիւնը կրնար իր դերին մեջն ըլլալ ու եկե-
ղեցին ու եկեղեցական գործերը իր ձեռքն առնել»:

Հարցումը տեղին է ու խորանուր:

Այնքան ասկէ որ աշխարհականներ չչէղսքաց-
ուին մեր կրօնական—եկեղեցական կեանքէն, եկեղե-
ցին պիտի չկրնայ գտնել իր ներքին խաղաղութիւնը.
եկեղեցականութիւնը պիտի չվայելէ իր ազատութիւ-
նը ու հեղինակութեան պակասէն պիտի առժէ, ան-
խառնափոխօրէն, ուղղակի եկեղեցին:

Ո՛չ նորոնտիր կաթողիկոս մը կրնայ հրաշքներ
գործել. ո՛չ նորոնտիր առաջնորդներ կրնան ծառա-
յիլ եկեղեցիներուն և ոչ ալ եկեղեցականութիւնը
կրնայ իր առաքելութիւնը անկաշկանդօրէն գործա-
դրել, եթէ եկեղեցին չձերբորդատուի աշխարհականնե-
րու լուծէն ու կամայականութիւններէն:

Անխառնափոխի այս ճշմարտութիւնը այնքան ակ-
նեղեցի է որ կարելի չէ այս կամ այն նկատումով ան-
տեսել: Պէտք է մտածել այս շատ ծանրակշիռ կացու-
թեան առջեւ:

Բնական, սակայն, անսխալօր այս կացութեան
մէջ իսկ, խոշոր պատասխանատուութեան բաժինը
կ'իյնայ մեր եկեղեցականութեան վրին վրայ, որոնք
փոխանակ արմատական քայլ մը առնելու, ու ստեղ-

ծուած ախտավարակ ու յուսալքիչ կացութիւնը դարմանելու վիրաբուժական հատու դանակի բուժիչ հարուածներով, կը հանդուրժեն անօրինակ դժուարութիւններու, ու կացութեան դարմանը կ'ակնկալեն Աստուածներէն որոնք անզօր են և որոնք թերեւս գոյութիւն չունին:

Ընկ խօսքով, եկեղեցականներու մեծագոյն մասը, եթէ ոչ ամբողջը, տեսակ մը կոյր գործիք ու խաղալիկ եղած են աշխարհական կարգ մը սնտոխ ու փառամոլ մարդոց ձեռքին մէջ ու իրենց օրերը կը վաանեն այդ փառնաբանութեան վնասակար մարդոց ևստին ու փափաքները շոյելով: Քանի որ, ապրուստի ու դիրքի շուանը կախուած է աշխարհական ազաններու կամ պարոններու քմահաճոյքներէն: Այսինքն: Եսերէն: Այս պայմաններու տակ, բնականօրէն պիտի տկարանար եկեղեցին ու կրօնական նկարագիրը՝ թէ՛ քէնտնի ոգեկոչած ու աննման «Եկեղեցին Հայկական»ին:

Այժմ եթէ կը խօսուի ու կը գրուի յամառօրէն բարեկարգութեան ընդհանուր նիւթին մասին, ըստ մասնց կուսակրօնութեան հարցին չափ ծանրակշիռ ու լուրջ հարց է աշխարհականներու չէզոքացման հարցը զուտ եկեղեցական հարցերէն:

Մեր մէջ եկեղեցական նուիրապետութիւնը, թէև Էտկանանին մէջ ոյժ և հեղինակութիւն կը վայելէ, բայց գործնականին մէջ իրողութիւնը ճիշտ հակառակն է:

Եկեղեցականութիւնը կորսնցուցած է իր հեղինակութիւնը: Աշխարհական հայորդիներ եկեղեցական գործերու առաջնորդութիւնն ալ ձեռք առած են ու

կրօնական հարցերու մէջ միջամուխ ըլլալով արգելք
կ'ըլլան եկեղեցականներու աշխատանքին ու կրօնա-
կան նսեմութեան:

Ազգային Սահմանադրութիւն ըստածը կրնայ
չստ լաւ օրինադիրք մը ըլլալ իբրեւ թուղթ. սակայն
տեսնուած է որ գործնականին մէջ սահմանադրական
այդ իրաւասութիւնները չարաչար գործածուած են
մեր աշխարհական «եկեղեցատէրներուն» կամ կուսակ-
ցական «գործիչներուն» կողմէն:

Անխուսափելի պատկերը այս է այսօր:

Ժողովուրդը ինք կ'ընարէ իր հովիւը, իր առաջ-
նորդը, իր թմականը, իր քաղաքական և այլ ուրիշ
ազգային—եկեղեցական ժողովները: Կաթողիկոս մը,
պատրիարք մը կամ առաջնորդ մը չստ քիչ անգամ
իր իրաւասութիւնը կը գործադրէ, պարզ այն պատ-
ճառաւ որ Ազգ. Սահմանադրութիւնը ճշդած է մեր
եկեղեցիին ժողովրդապետական ոգին ու բնոյթը: Ու
այս ուղուցիկ ու ականջին լաւ հնչող բացատրութիւն-
րէն տուած են թէ ժողովուրդը և թէ եկեղեցին:
Քանի որ քուէով (ժողովրդական) ընտրուած առաջ-
նորդ մը, հովիւ մը կամ նոյնիսկ պատրիարք մը, ի
պահանջել հարկին, տաանց հիմնական պահաւորի, լսկ
քուէներու սլծին վրայ հիմնուելով պատահած է որ
պաշտօնէ հանուի ու չէզոքացուի, երբ յիշեալ պաշ-
տօնեան, նոյնիսկ արդարացիօրէն, չէ շոգոքորթած
կամ հաճելի չէ թուած այսինչ «գօրաւոր» կողմա-
կերպութեան կամ այնինչ «ազգեցիկ» ազգային խմբա-
կին: Ժողովրդական այս պատկերացումը զօր կ'ընեմ,
իր արդարացումը ունի: Միթէ այս չէ՞ զժբախտ ի-
րողութիւնը: Միթէ առաջնորդ մը, հովիւ մը կամ ե-
կեղեցական պաշտօնեայ մը, որովհետեւ ժողովրդին

կողմէ վարձուած է, ժողովուրդին կողմէ կը վճարուի ահ ու դողի մէջ չ'ապրի՞ր, այն արդար մտահոգութեամբ թէ եթէ բոլորին սիրելի չըլլայ կրնան զինքը պաշտօնէ հանել, անգործ ձգել:

Ժողովուրդին ձեռքը նայող եկեղեցականութենէն եկեղեցին չի կրնար շահիլ: Ժողովուրդին հաճելի ըլլալու ստիպուած քաղաքականութիւնը հետապնդող եկեղեցականէն եկեղեցին չի կրնար հրապոյր ստանալ: Այս կամ այն մարդուն, այս կամ այն հաստուածին մարդը ըլլալու ստիպուող եկեղեցականին համայնքը չի կրնար հպարտանալ:

Իրողութիւնն այն է որ հայ եկեղեցականը, որովհետեւ «ժողովրդապետական է հայ եկեղեցին», ստիպուած է որքան կրօնական մը ըլլալու նոյնքան ալ, սանկ փոքր տեսակէտէն, զիւսնազէտ մը ըլլալու, խորամանկութիւններու մասին մտածելու:

Բայց այս ախուր ճշմարտութիւնը այեքան ծանօթ է եկեղեցական զործերով հետաքրքրուողներու որ, հարկ չկայ աւելի մանրամասնութիւնն ընելու տիրող ահաւոր, ամօթալի ու յուսալքիչ կացութեան:

Պէտք է մտածել կացութեան դարմանին վրայ, օր առաջ: Պէտք է հայ եկեղեցականութիւնը ձերբազատել աշխարհական տիրակալութենէն: Պէտք է հայ եկեղեցին փերագործնել հայ եկեղեցականին, եթէ իրապէս կը սիրենք մեր աւանդութիւններն ու մեր դարաւոր եկեղեցին, որուն պատմութիւնով ու անցեալով արդարօրէն կը հպարտանանք:

Մեր եկեղեցատիրութիւնը ապացուցանելու համար անպատճառ Տիրակալն պաշտօններ ձեռք անցընելու հետամուտ ըլլալու չենք: Մեր օգգոսիրութիւնը ա-

պաշտօնականութեան համար, անպատճառ եկեղեցական մը սեւ, անպատակներուն ծառայեցնելու համար, զայն գերի ընելու չենք մեր փափաքներուն ու հոգիներն:

Աշխարհականներ միշտ ալ կրնան, եթէ իրաւ է իրենց կրօնասիրութիւնն ու ազգասիրութիւնը, գործնական ծառայութիւններ մատուցանել իրենց համայնքային — կրօնական հաստատութիւններուն, իրենց անշահախնդիր ծառայութիւնները արամադրելով թեմին եկեղեցական պետին ու անոր ծառայող հոգեւոր հովիւներուն:

Այնքան ասին որ աշխարհականներ պիտի կրնան իրենց քուէով կամ ազգեցութիւններով ազգեւ մեր կրօնականներու շարժումներուն ու ծախսատանքներուն կամ անօրինել անոնց ընտրութիւնը այսինչ կամ այն ինչ պաշտօնի, եկեղեցին ու եկեղեցականութիւնը պիտի մնան անկեալ ու խեղճ վիճակի մը մէջ:

Որովհետեւ եկեղեցին ու եկեղեցականութիւնը գործիք ու խաղաղիկ եղած են աշխարհական քուէատուներուն ձեռքը, շատ քիչ խելահաս մարդիկ կ'ուզեն սիրով մանկ եկեղեցականութեան լուծին տակ:

Մեր եկեղեցականութեան շարքերուն նօսը մնալուն գլխաւոր պատճառներէն մէկն ալ այս երեւոյթն է: Մարդիկ չեն ուզեր, հոգեւոր — կրօնական լուծի տակ մանկէ յետոյ, լուծը կրկն հաւաք աշխարհական փառասէրներու ալ, որոնք շատ հեշտութեամբ կամ կը քանդեն և կամ կը շինեն ենթակառուցիւն ասպարէզը:

Եկեղեցական — կրօնական պաշտօններու նշանակութիւնը պէտք է ըլլայ մի միայն եկեղեցական նուիրատեանութեան խաղաղակամ: Առաջնորդական կամ հովուական պաշտօնները պէտք է ըլլան Ռեալիստիկ և ոչ թէ րմսումի: Կաթողիկոս մը պէտք է իրաւունք

ունենայ իր թեմերուն առաջնորդները նշանակելու, ու առաջնորդ մըն ալ, իր կարգին, պէտք է իրաւասութիւն ունենայ նշանակելու իր թեմին եկեղեցիներուն հովիւները, որոշ շրջանի պաշտօնավարութեան իրաւունքով: Անշուշտ չեշտելու հարկ չկայ թէ իր պաշտօնին գիտակցութիւնը չունեցող առաջնորդ մը կամ հովիւ մը, կրնայ, գարձեալ վերին հեղինակութեան որոշումով իրենց պաշտօնէն ետ կանչուիլ կամ պատժուիլ:

Ամէն անոնք որ անպայման կը հիանան կաթողիկ մեծ եկեղեցիին կազմակերպութեան ու զօրութեան, կրնան այս կէտին վրայ իրենց ուշադրութիւնը դարձնել այդ հաստատութեան վրայ ուր կրօնական համայնքային գործերը կը ղեկավարուին վերէն: Կաթողիկ հաւատացեալ ժողովուրդը միշտ ալ կը ստատարէ իր եկեղեցիին ու կրօնական առաջնորդներուն, առանց իր ծառայութիւնները պայմանադրական ընելու: Միթէ կարելի չէ՞ այս մասին խորհիլ ու մըտածել:

Որքան որ ալ մեզի հաճելի թուին «ժողովրդականտական» կամ «զուտ—ազգային եկեղեցի» բացատրութիւնները, մեր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիի կապակցութեամբ, չենք կրնար ըսել թէ այդ բացատրութիւնները կրցած ենք արդարացնել մեր «գարծերով» ու մեր վերջին շրջաններու կրօնական հասկացողութեամբ: Լաւ է ամէն բառ ու ամէն բացատրութիւն իր ակզը գնել, փոխանակ պատէ պատ զարնուելու կամ փնտսակար հանդիսացած գեղեցիկ բացատրութիւն մը յաւերժացնելու:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ճգնաժամի շրջան մըն է որ կ'ապրի: Ճգնաժամ մը համա-

հաւատար է պատերազմի մը պայմաններուն: Ամենա
նախնական երկիրն անգամ ճշմարտի օրերուն
պահ մը կը մոռնայ իր սահմանադրութիւնն ու ժողովրդապետականութիւնը ու իր նկղութենէն ու վր-
տանգաւոր կացութենէն դուրս գալու համար կ'որդե-
զրէ անմիջական, կտրուկ ու գործնական ճամբան:

Այնքան տառն որ կը յաւերժանայ մեր եկեղե-
ցական—կրօնական կեանքին մէջ աշխարհական գոր-
ծիչներու սփոխութեան իրաւասութիւնը ու այնքան
տառն որ, հայ եկեղեցականութիւնը պարտադրուած
կը զգայ իր պաշտօնն ու դիրքը պահելու համար
խնկարկելու աշխարհական իր ժողովուրդին անդամնե-
րուն, բնական արամաբանութեամբ, իր դիրքը օրէ օր
կ'իյնայ ու իր արդեցութիւնը կը նուազի յաջս իր
հետեւորդներուն:

Հայ եկեղեցին պէտք է վերադարձնել հայ եկե-
ղեցականին: Իրողութիւնն այն է որ հայ եկեղեցին,
նոյնիսկ զուտ կրօնական աշխատանքներուն մէջ ալ,
յաճախ, ելած է հայ եկեղեցականին ձեռքէն: Աւե-
լորդ օրինակներ տալու հարկ չկայ: Վարչական մե-
քենան պէտք է օրինաւորապէս ու գործնականապէս
յանձնել հայ եկեղեցական իշխանութիւններուն, ա-
ռանց անոնց գործերուն միջամուխ ըլլալու արամա-
դրութեամբ: Այլապէս, պէտք է ըսել որ շատ փայլուն
չի հնչեր հայ եկեղեցւոյ տպագոյին մասին յոյս տա-
ծողներու լուսաւոս կտրծիքները, քիչ մը ամէն տեղ:

Հայ եկեղեցականը պատասխանատու ըլլալու է
իր խղճին և իր կրօնական պետին: Ատկէ դուրս ա-
նիկա օրեւէ մտահոգութիւն ունենալու չէ: Այս կամ
այն կուսակցութիւնը սիրաշահելու մտահոգութենէն
ու ստորնացուցիչ վիճակէն բարձր մնալու է: Յաճախ

մեր եկեղեցականները իրենց կրօնական—եկեղեցական կոչումէն ու պաշտօնէն աւելի կը զբաղին անձեր սիրաշահելու մեղապարտ, սակայն պարտաւորիչ գործով:

Եկեղեցականը առանձնապէս նուիրուելու է իր կրօնական ու եկեղեցական աշխատանքներուն, այն տակն է որ անիկա իրապէս ու գործնականապէս պիտի կրնայ օգտակար ըլլալ իր ժողովուրդին ու պիտի կրնայ գլուխ հանել իրմէ սպասուած տկնկալութիւնները:

Կ'արժէ մտածել այս կացութեան վրայ: Կ'արժէ արմատական ու իրաւական բարեկարգութիւնը իրականացնել գործնականօրէն: Եթէ իրապէս մենք կր հաւատանք որ Հայ եկեղեցին պէտք ունի զօրացման և ուժեղացման ու կարելի է՝ ըսել թէ հակառակը պնդողներ պիտի գտնուին, այդ պարագային էնք կրնար չմտածել ու չմտահոգուիլ մեր եկեղեցական նութեան ննթարկուած վիճակով:

Աշխարհական—եկեղեցասէրներ կրնան օգտակար ըլլալ իրենց եկեղեցիին ու եկեղեցականին երբ եկեղեցին ու եկեղեցականը անկախ ըլլան իրենց քրմահաճօքներէն ու մարդկային փառասիրական ձրգտումներու կապանքներէն:

Անգամ մը որ ձերբազատուին եկեղեցին ու եկեղեցականը «աշխարհական—սզգայինճի—եկեղեցասէրներու» քանդիչ ազդեցութենէն, հայ եկեղեցականութիւնը իր հեղինակութեան վարկը վերագտնելով պիտի կրնայ աւելի սցեւորութեամբ ու աւելի եւանդով իր գործին փարիլ: Ասպարէզը պիտի գտնէ իր անկախութիւնն ու վարկը: Նոր եկեղեցականներ սիրով

պիտի ասկան իրենց աշխատէս արդէն իսկ զժուար ու հոգեմաշ լուծին:

Անկախութեան ու հեղինակութեան զգացումը որ եւ է ստապրէզի մարդուն համար ինքան մը ու խայթ մըն է միանդամայն: Մարդիկ իրենց պաշտօնին ընծայուած կարեւորութենէն յաճախ կը ստանան իրենց գործունէութեան եռանդն ու խանդը:

Կարելի է առանց մտահոգութեան մօտենալ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին կեանքը վտանգող այս հարցին նկատմամբ գոյութիւն ունեցող որքան անհասկացողութեան նոյնքան անաարբերութեան գոյավիճակին ու զգացումին:

Հարցը լուրջ է ու կը կարօտի նոյնքան լուրջ ու պարզ նկատառութեան:

Իրաւ է որ անդ անդ ու ատեն ատեն հայ եկեղեցականներ չարաչար գործածած են իրենց կարգն ու պաշտօնը ու այդ պարագաներու տակ ժողովուրդը գատաւոր ու պահապան հանդիսացած է: Սակայն եկեղեցականներու մէջ գոյութիւն ունեցող կարգ մը անպատասխանատուներու մեզքը կարելի է ընդհանուրինը նկատել, քանի որ ժողովուրդն ալ միշտ չի տակ ու արդար է եղած իր գատաւմներուն ու իրեն վստահուած իրաւունքներուն հանդէպ: Վերջը, մտահաւորաբար մեր մէջ ու յետ պատերազմեան շրջանին մանաւանդ ժողովուրդը է զգացուցած իր ձայնը որ եւ է հեղինակաւոր գէպքի տալիքով, ժողովուրդի տնունով քանի մը ամենազէտներ ու ինքնակոչ ու ինքնընտիր «առաջնորդներն» են որ ուզած են ամէն ինչ անօրինել, ըլլայ քաղաքական հարց, ըլլայ կրօնական հարց, երբ այդ հարցերուն միջամուխ ըլլալը

ազգէն ու եկեղեցիէն աւելի շահաւէտ նկատուած է
առաջնորդողին կազմակերպութեան ու անոր ետեւ
գտնուող խմբակցութեան :

Այս բացորոշ իրողութիւնը, որուն վկայութիւնն
է մեր վերջին կէս—դարու արիւնոտ ու գժրախտ
պատմութիւնը, կարելի է Է չտեսնել : Ուրացումը մեզի
տեղ էի տանիր :

Ուրեմն :

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ բարե-
կարգութեան ընդհանուր հարցին մէջ կարեւորագոյն
կէտերէն մին պէտք է նկատել աշխարհական—եկեղե-
ցատէրներու չէզոքացման պարագան զուտ կրօնական—
եկեղեցական ժողովներէն ու պաշտօններէն, վերոյիշ-
եալ պայմաններով : Այսինքն : Ամէն եկեղեցւոյ զա-
ւակ պարտի ու կրնայ ծառայել իր եկեղեցիին ըստ
առաջնոյն, խորհրդակցարար կամ աշխատակցարար,
ստկայն առանց քուէի իրաւասութիւններ վայելելու
եկեղեցական—կրօնական վարչական գործերու իրա-
գործման մէջ : Եկեղեցական գործերուն կրնան տնօրի-
նել իրենք եկեղեցականները, առանց արտաքին ազ-
գեցութիւններու ենթակայ ըլլալու : Այլապէս, իրաւ
որ անյոյս կացութիւն մը պիտի յարատեւէ եկեղեցւոյ
ներքին կեանքին մէջ, առանց արմատական ու գործ-
նական վերջնական լուծումի մը յանգելու :



ՆԻԻԹԱԿԱՆԻ ԲԱՐԵԼԱԻՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ներկայ տկարութեան աչքառու պատճառներուն գլխաւորներէն է եկեղեցականութեան որքան հոգեկան անպատրաստի վիճակը՝ նոյնքան նիւթական անձուկ կացութիւնը:

Նիւթական լաւ վարձատրութիւնը պայման ու երաշխաւորութիւն է որեւէ զործի յաջողութեան: Քսաներորդ դարու մէջ ու այդ դարու ըմբռնումին համաձայն նիւթական վարձատրութիւնը պայման է լաւ եկեղեցականութեան մը գոյութեան: Ու անբաւական ոչինչ կայ այս տեսակէտին մէջ: Վերջապէս պէտք է ընդունինք որ եկեղեցականներն ալ հողեղէն տրտածներ են ու անոնք ալ մսէ ու սսկորէ չինուած ըլլալով, պէտք ունին մարդկային շատ հասարակ պահանջներու գոհացումին:

Դրամը անոնց համար ալ անհրաժեշտութիւն մըն է, տպրելու ու տնելու տնտեսէտէն: Լաւ գործը տրդիւնք է լաւ խնամուած մարմնին: Այն մարդ տրտածը որ մտահոգութիւնն ունի իր օրապահիկին այդ մարդը չի կրնար իր գործին լոյն սպասարկութիւն ընել ու իրմէ ակնկալուած աշխատանքը արդարացնել:

Երեւոյթը տարբեր չի կրնար ըլլալ եկեղեցականին համար ալ: Որովհետեւ ան ալ ենթակայ է մարդկային տկարութիւններու ու մտահոգութիւններու: Մեր մէջ, առհասարակ, լաւ վճարուած են մեր եկե-

ղեցականները, եթէ նկատի ունենալու ըլլանք մեր պայմաններն ու այն վիճակները որոնց մէջէն անցնելու պարտադրուեցաւ թէ ժողովուրդը և թէ եկեղեցին:

Սակայն, կրնայ ըսուիլ թէ, աւելի լաւ պայմաններ կրնայ ստեղծուիլ մեր եկեղեցականութեան համար, անոր նիւթական ակնկալութիւնները աւելի լաւ ու հիմնական հիմերու վրայ դնելով:

Առհասարակ, քիչ բացառութիւններով, լաւ չեն վճարուիր քահանաները: Ուրիշ պատճառ մըն ալ որ շատեր խուսափին այդ ասպարէզին ծառայելու իրենց փափաքէն: Կրնայ ըսուիլ որ այս վիճակը արգարացում չունի: Կացութիւնը շատ հեշտութեամբ կրնայ բարեփոխուիլ եթէ կրօնական իշխանութիւններ հարկ եղած ուշադրութիւնը ընծայեն կացութեան: Եկեղեցականութեան ասպարէզը պէտք է դրաւիչ ընծայի: Մարդիկ որ այդ ասպարէզին մէջ մտնել կ'ուզեն խուսափելու չեն ասպարէզին մօտենալէ առաջ:

Եկեղեցին ու եկեղեցականութիւնը կեանքին մէջ զործ մը ու զործունէութիւն մը կ'ենթադրեն ու ամէն զործ ու զործունէութիւն պիւտճէի կամ նիւթականի ապահովութեան պէտք ունի: Առանց այս տարրական մօտեցումին տարբեր կերպ չէր կրնար ըլլալ մեր վճարեալ—եկեղեցականութեան վիճակը:

Լաւ վճարուած պաշտօնեայ մը լաւ գործ կրնայ արտադրել: Ու փոխադարձաբար: Եկեղեցական թեկնածուներու փախուստին գլխաւոր պատճառաբանութիւններէն մէկն ալ իրենց վարձատրութեան հարցն է: Պէտք է ըմբռնել թէ ամէն մարդ նոյնը չի կրնար ըլլալ. ոմանք խառնուածքով և ըմբռնումով վեհանձն ըլլալով չեն հանդուրժեր հայ եկեղեցականութեան

նիւթական վարձատրութեան եղանակին: Ու առհէ կը տուժէ եկեղեցին:

Ոմանք նիւթականի կապակցութեամբ կ'ըսեն թէ քանի որ դրամի հարց կայ լաւ կ'ըլլայ յաւերժացնել կուսակրօնութիւնը, քանի որ անոնք քիչ դրամով կը պաշտօնավարեն, իսկ ամուսնացեալներ՝ ահագին դու-մարներով միայն յանձնառու պիտի ըլլային եկեղեցականի սքեմը՝ հագնելու:

Տխուր հոգեբանութիւն մը ու անտաղարակ մօտեցում մը հարցին որ դժբախտաբար յատուկ է միայն շուկայի հոգեբանութեամբ մեծցած մեր բժա-խանդիր, ու եկեղեցական դործերով հետաքրքրուող անձնաւորութիւններուն: Այս դժբախտ դասակարգին մէջ կարելի է գտնել նաեւ անսխալական ու ամէն բան դիտցող երանելի մեր առաջնորդներէն շատերն ալ:

Կարելի է հասկնալ մտայնութիւններու չափն ու սահմանը երբ մարդիկ դրամի քանակով կ'ուզեն պատրաստել իրենց հոգեւորականները:

Բարեբախտաբար, սակայն, այս կարգի մտածող-ները չեն կրնար յամենալ իրենց տեսակէտին վրայ երբ այնքան յստակ է իրենց յառաջացուցած տեսա-կէտին սղբալիութիւնը:

Կուսակրօն կամ ամուսնացեալ, ինչ որ ալ ըլլայ եկեղեցականին կարգը կամ սքեմը, հարկ է ենթակո-նելուն վճարել իրենց արժանիքին ու արժանապա-տրութեան համաձայն: Ազգ մը կամ ժողովուրդ մը որ եթէ իրապէս կը հոգայ ու կը դուրդուրայ իր ե-կեղեցիին վրայ, չի կրնար իր եկեղեցականը չհոգալ նոյն բարձր զգացումով. այլապէս խօսքերն ու վեհ զգացումները պարզ ծաղրանքներ կրնան նկատուիլ:

Սկզբունքով ընդունելու և կիրարկելու է հայ եկեղեցականութեան նիւթական տպահովութեան լուսագոյն վարձատրութիւնը: Այլապէս ստեղծուած ոգրալի կացութիւնը պիտի շարունակուի անարգել: Ամէն անոնք որոնք կը մտադրեն եկեղեցականութեան լուծը իրենց վզին վրայ առնել, իրենց ասպարէզին ընտրութիւնն ընելէ առաջ անայլալ կը խորհին ու կը քննեն իրենց արուելիք նիւթական վարձատրութեան պայմանները: Շատ րան կախուած է այդ կէտէն: Եթէ նիւթական վարձատրութիւնները լաւ թուին իրենց, անոնք շատ հաւանականութեամբ կ'ընտրեն իրենց ասպարէզը: Այլապէս տատամքելու զօրաւոր պատճառ մը կը նկատեն այդ պարագան:

Ինքնախտրութեան հարկ չկայ: Մամոնան միշտ ալ խօսած է մարդուն, ինչ պիտտիկի տակ որ ալ եղած ըլլայ ան, եկեղեցական կամ աշխարհական: Կուէ որ ըմբռնենք այս պարագան: Որքան շուտ այնքան լաւ:

Նիւթականի պարագան որքան փափուկ նոյնքան լաւը կէտ մըն է բարեկարգութեան ընդհանուր հարցին մէջ: Կարելի է որեւէ կարգի պատճառարանութեամբ անտեսել զայն:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0052371

[504]

A $\frac{I}{13310}$

Գին՝ 150 Լ. Դ.

Ասանալու համար դիմել՝

MAKSoud MAKSoudIAN

Imprimerie "Massis,,

Rue Emir Emin

Beyrouth